№ 144 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 3 ՅՈՒԼԻՍԻ

1913
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 3 ՅՈՒԼԻՍԻ № 144

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը
և 7 ամսվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Сергіевская ул. № 5.
Tiflis, Rédaction „Mschak"

Խմբագրատան տելեֆոն № 2—53.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10—20 կոպ.

Տպարանի տելեֆոն № 67.

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ".

TIFLIS, Rédaction du journal „MSCHAK".

ՅՈՒԼԻՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ
ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ 6 ՌՈՒԲ.

Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած:

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամականիշ. ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ:

Յայտարարութիւնների համար պիտի վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.:

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торг. Дома Л. и Э. Метцль и К°, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում Морская, 11, Վարշավայում Маршальковская, 130, Վիլնոյում Большая 38, Պարիզում 8 Площадь Биржи.

1913 թւի տարեկան բաժանորդները, որոնք առ 1-ն յունվարի 1914 թ. լրիւ վճարած կլինեն բաժանորդավճար 10 ռուբլին, ձրիաբար կը ստանան հետևեալ 2 գրքերը. 1) «Մշակ» և հայ կինը», 2) «Մշակի» քառասնամեակ»:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՆԱՏԱԼԻԱ, ԴԱՒԻԹ, ԵՂԻՍԱԲԷԹ ՍԱՐԴԱՐԵԱՆՆԵՐԸ, ԱՆՆԱ, ԱԲԳԱՐ ՅԱԿՈԲԵԱՆՆԵՐԸ, ՆԻՆԱ ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆԸ, ՄԱՆԻԱԿ և ԳՐԻԳՈՐ ԽԻԹԱՐԵԱՆՆԵՐԸ ցաւօք սրտի յայտնում են ազգականներին, բարեկամներին և ծանօթներին, առաջինը իր թանգագին որդու, 2-րդը՝ սիրելի եղբօր, 3-րդը՝ տագեր, 4-րդը՝ եղբօր, 5-րդը մօրեղբօր և 6-րդը՝ իր քեռու

ԱԴԱՄ ԹՈՎՄԱՍԵԱՆ
ՍԱՐԴԱՐԵԱՆ-ԱՐԵՒՇԱՏԵԱՆԻ

մահը, որ տեղի ունեցաւ յուլիսի 1-ին, առաւօտ. ժամը 4-ին: Յուղարկաւորութիւնը կիրակի, յուլիսի 7-ին, առաւօտ. ժամը 10-ին, իր բնակարանից, Ելիզաւետինսկայա փող. № 94, դէպի Վանքի աւագ-եկեղեցին: Ամբիծը ամէն օր, երեկոյեան ժամը 7-ին: Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը:

546. (2.) 2—1

Ներսիսեան Հայոց Հոգ. Դպրոցի Հոգաբարձութիւնը

սրանով յայտարարում է, որ առաջիկայ 1913/14 ուսումնական տարում հրաւիրվում է դպրոցիս համար մեկ

ՎԵՐԱԿԱՑՈՒ

տարեկան 600 ռուբլի ռոճիկով: Ցանկացողները կարող են դիմել հոգաբարձութեանս մինչև յուլիսի 4-ը հետևեալ հասցէով՝ Тифлисъ. Попечительству Армянской Духовной Нерсисянъ Семинаріи. 485. 4—4
(18, 27. 3) տռ.

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆԸ

սրանով յայտարարում է, որ իր խնամքին յանձնված դպրոցի համար առաջիկայ ուսումնական տարվանից հրաւիրվում են բարձրագոյն կրթութեամբ դասատուներ հետևեալ առարկաներից.

1. Հայոց լեզու և գրականութիւն, շաբաթական 20 դաս.
2. Մաթեմատիկական առարկաներ, շաբաթական 22 դաս.
3. Բնախօսութիւն, շաբաթական 2 դաս.
4. Նկարչութիւն, շաբաթական 8 դաս:

Դասագինը՝ առաջին 12 դասի համար 70-ական ռուբլի, իսկ մնացած դասերի համար 60-ական ռուբլի: Բացի դրանից հայերէնի և մաթեմատիկայի գրաւորների համար տրվում է առանձին վարձատրութիւն: Խնդիրները՝ ուսման դօկումենտների հետ միասին ուղարկել հոգաբարձութեան մինչև յուլիսի 4-ը այս հասցէով՝ Тифлисъ. Попечительству Армянской Духовной Нерсисянъ Семинаріи. 484. 4—4
(18, 27, 3) տռ.

ԲԺԻՇԿ
ՄԱԿԱՐԵԱՆՑԸ
Մայիսի 15-ից վերսկսեց հիւանդների ընդունելութիւնը
ՊԵՍՏԻԳՈՐՍԿՈՒՄ
Մասնագիտաբար—միզասեռական, վեներական, սիֆիլիս և կաշուի հիւանդութիւններ:
Հասցէն՝ Верхній бульваръ, д. Зипаловой.
(օ.ք.) տռ. 401. 20—18

ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՏՕՆԸ

Վերջացաւ Ալէքսանդրոպոլի ցուցահանդէսը:

Նա հանդէս եկաւ իբրև կուլտուրական մի տօն և միևնոյն ժամանակ իբրև կուլտուրական մի հարցաքննութիւն:

Իբրև կուլտուրական տօն նա շատ մխիթարական մի երևոյթ էր, մէկը այն գեղեցիկ սկզբնաւորութիւններից, որոնցով պէտք է առաջ գնայ մեր նորագոյն առաջադիմական կեանքը տնտեսագիտական ասպարէզում:

Իբրև կուլտուրական հարցաքննութիւն նա պարզեց մի քանի դրական կողմեր. բայց միևնոյն ժամանակ ցոյց տուեց, թէ որքան դեռ յետամնաց է մեր արդիւնաբերութիւնը այն կատարելութիւններից, որոնք պէտք է համարվէին անհրաժեշտութիւն մեր արդի իրականութեան:

Ցուցահանդէսը ասպարէզ հանեց այն փոքրաթիւ կուլտուրական փորձերը, որոնք արված են գործնական կեանքի մէջ և ձգտում են հաստատ հող գտնել իրանց յառաջ գալուն համար:

Մի արդիւնք, որ առաջ բերեց ցուցահանդէսը, աչքի է ընկնում ցուցահանդէսից յետոյ: Դա ցուցահանդէսի գաղափարի գիտակցելն է: Ալէքսանդրոպոլ քաղաքի և Ալէքսանդրոպոլի գաւառի ժողովուրդը, տեսնելով ցուցահանդէսը, տեսնելով հանդէս բերված իրերը և տեղեկանալով ցուցահանդէսի բաժանած պարգևների մասին, չափազանց ափսոսում է, որ աւելի ստուար բազմութեամբ չէ մասնակցել ցուցահանդէսին և չէ բերել ի ցոյց բազմաթիւ գեղեցիկ իրեր, որը նա կարող էր արդիւնաբերել:

Արդարև՝ Շիրակի ժողովուրդը ցուցահանդէսում միայն մի երկու նմուշներ էր ներկայացրել բուսաբար և կատաբեալ կենդանիների կամ արհեստական առարկաների. մինչդեռ Շիրակի ընդարձակ վայրերում ապրող ժողովուրդը ունի հանդէս բերելու համար աւելի բազմատեսակ և գեղարակ իրեր, քան նա ներկայացրել է իրապէս:

Եւ հարիւրաւոր բերաններից մենք լսում էինք, թէ ժողովուրդը այժմ հասկանում է և գնահատում է ցուցահանդէսի հիմնական գաղափարը և կը ցանկանար տեսնել նրան իրագործված, իբրև պարբերաբար կրկնվող կուլտուրական մի ձեռնարկութիւն:

Որքան էլ ներկայ առաջին ցուցահանդէսը, իբրև նախնական փորձ, հանդէսը, իբրև նախնական փորձ, համարվի բաւարար, այնուամենայնիւ պահանջ կայ, որ մեր իրականութիւնը աւելի ընդարձակ և ճոխ ապացոյցներ տայ թէ ժողովրդի արած կուլտուրական առաջադիմութեան և թէ իր ընդունակութեան՝ գործելու արդիւնաբերական և լայն տնտեսական գործառութիւնների ասպարէզներում:

Մենք կրնդգծենք մի քանի դրական կէտեր Ալէքսանդրոպոլի ցուցահանդէսի յայտնագործած երևոյթների մասին:

Ա. Քալանթար

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ԼՈՒՐԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Պարիզից մեզ գրում են, որ հայկական ազգային պատգամաւորութեան անդամ Մինաս Չերազ, հիւանդութեան պատճառով ստիպված լինելով հեռանալ Պարիզից և գնալ այլ տեղ դարմանելու իր առողջութիւնը, գրաւոր հրաժարական է ուղարկել Ամենայն Հայոց Կաթողիկոսին պատգամաւորութեան անդամակցութիւնից:

ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՏԱՐՕՆԷՆ

Հողի՞ թէ՞ ջրի հարց

Մուշ, 17 յունիս

Բազմաթիւ տարիներէ ի վեր կը յուզուի Թիւրքահայոց հողային հարցը: Վերջին տարիներու մէջ աւելի սուր կերպարանք է առացեր այդ խնդիրը և ներկայիս դարձեր է հայերուս համար գորդեան հանգոյց, իսկ [illegible] տեսակ մը [illegible] Բազմաթիւ օրագրողներ ու աշխարհագրագէտ շրջիկներ և պաշտօնական ու անպաշտօն խիստ հեղինակաւոր գրիչներ ուզեր են տեսակ մը պատկերացում տալ այդ խնդրոյն: Եւ սակայն խնդիրը կը մնայ անլուծելի և երթալով կը կնճռոտի:

Մեր խոնարհ կարծիքով՝ հողային հարցի բանալին հայկական հարցն է: Մէկը լուծուելով՝ միւսը ինքնին կը լուծուի:

Հոս սակայն կուզէի ըսել, որ տեղ-տեղ ջրի հարցը հողի հարցէն շատ աւելի կարևոր և էական է:

Այդպէս է օրինակ Մուշի շրջանը: Տարաբաղդ Տարօնի իրականութիւնը հողի ու ջրի ցաւէն բռնուած է միանգամայն: Հողի և ջրի աստուածները, կարծես ձեռք-ձեռքի տուած, խսպառ խեղդել, ոչնչացնել կուզեն Տարօնի խեղճ հայութիւնը:

Այս անգամ խնդիրը կը դառնայ 200 տնւոր հայաբնակ Աւրան մեծ գիւղի և 17 տնւոր քիւրդաբնակ Բաղչէ գիւղի միջև: Բաղչէն մէկ ժամ հեռի կը գտնուի Աւրանէն՝ վերջինիս հոսը ինկած լեռան վրայ, իր հիանալի դրախտանման ձորահովիտով միասին: Բաղչէի ձորը կը պարունակէ այնքան ջուր, որ եթէ արդարութեամբ մատակարարուի, կարող է Բաղչէի պէս տասն և Աւրանի պէս հինգ գիւղեր գոհացնել: Համիդեան բռնապետութեան ժամանակին բաղչեցիք զօրանալով կորեցին աւրանցոց ջուրը և արգիլեցին աւրանցիներն օգտուելու լեռնային ընդարձակ (80,000 դեսեատին) անտառէն և արօտավայրերէն:

Աւրանցիք դիմեցին կառավարութեան և երկար տարիներու դատավարութենէն յետոյ, ծախսելով աւելի քան 150 լիրա (1350 ռուբլի), Պոլսոյ վճռաբեկ ատեանէն վերջապէս շահեցան դատը, թէ «աւրանցիք ալ Բաղչէի լեռան մէջ ջուրի և արօտի հաւասար իրաւունք ունին»: Բայց վճիռը մնաց և կը մնայ տակաւին անգործադրելի: Այնուամենայնիւ աւրանցիք կը յաջողին զանազան կողմնակի միջոցներով շահիլ քիւրդերու սիրտը և կիսովին կօգտուին ջուրէն ու անտառէն մինչև օսմ. սահմանադրութեան վերահաստատումը, որմէ ետքը մինչև այս տարի աւելի լայն շնորհներով եօլա կերթան բաղչեցոց հետ:

Այս տարի, սակայն, երբ քիւրդական շարժումը բացարձակ գլուխ է բարձրացուցեր, բաղչեցիք կրկին բոլորովին կտրեցին աւրանցոց ջրաղացներու և ոռոգման ջուրը: Եւ այսպէս՝ աւրանցոց միայն հացի վնասը կը հաշուուի աւելի քան 500 լիրա, ուստի և Աւրանի շրջանն այս տարի սով կամ սոսկալի թանկութիւն անխուսափելի է:

Մուշի կառավարութիւնը ի պատասխան աւրանցոց բողոքագրին ըսեր է, թէ Կ. Պոլսոյ վճռաբեկ ատեանի նախորդ վճիռն իր ոյժը կորսնցուցած է այլևս և պէտք է աւրանցիք նորէն դատի դիմեն: Եւ նորէն երկար տարիներ և առնուազն 150 լիրա է հարկաւոր դատը շահելու, առանց սակայն գործադրութեան իրաւունք ձեռք բերելու:

Թիւրք կառավարութեան արդարադատութիւնը Աւրանի պէս խոշոր գիւղ մը կը զոհէ 17 տնւոր բաղչեցոց, որոնք բացի աւարառութեան վնասէն՝ ուրիշ ոչ մէկ օգուտ չունին ընդհանուր մարդկութեան և կամ երկրին ու կառավարութեան, որ իր շահն իսկ չի գիտեր պաշտպանել: Զի եթէ այս տարի Աւրանի արտերը ոռոգուէին, ապա պետութիւնն այդ արտերէն տասանորդի հասոյթ կը ստանար առնուազն 500 լիրա. իսկ արտերը չոր մնալով, այս տարի Աւրանը 300 լիրայէն աւելի չպիտի կարողանայ տասանորդ գոյացնել, որով 200 լիրա զուտ վնաս պիտի համրի Թիւրք կառավարութեան:

*
* *

Այս խրոնիկը գրելէ յետոյ, կարծեմ կարժէ թռուցիկ ակնարկով մը քիչ մը աւելի ծանօթացնել ընթերցողին Աւրանի և Բաղչէի պատմութիւնները, որպէս հարևան պատմական գիւղեր:

«Աւրան» բառը կը նշանակէ Աւրուանք: Աւանդութիւնը կըսէ, որ ասոնք շատ հին ժամանակէն գաղթած-եկած են ծանօթ Բաղչէ գիւղէն, նեղուելով թերևս շրջակայ լեռնական քիւրդերէն: Բաղչէն մեր հեթանոսական շրջանի մէջ Տարօնի նշանաւոր Վիշապ աւանն է, որմէ՝ ըստ ոմանց՝ առաջ եկեր է «Աւրան» բառը. գիւղացիք հեռանալով Վիշապ աւանէն և հաստատուելով մէկ ժամ հեռի դաշտավայրի վրայ՝ կրկին իրենք գիրենք սնուանել են [illegible] բառը աղաւաղուելով դարձեր է «Աւրան», իսկ տեղացիք՝ աւրանցիք:

Բաղչեցի այժմեան քիւրդերը զանազան տեղերէ նորեկ գաղթականներ են և մինչև համիդեան շրջանը կապրէին լոկ ստոր ծառայութիւններով և Աւրանի փողոցներու մէջ մուրալով ու հայերէն խօսելով: Սուլթան Համիդ ստեղծեց համխալամութիւնը, և բաղչեցի ստրուկները եղան բացարձակ տիրապետողներ: Այժմ բաղչեցիներէն ոմանք իրենց ընդարձակ լեռներուն մէջ ազատօրէն կը պարապին խաշնարածութեամբ և ունին այնքան թաղուած ոսկի, որ կարող են ամբողջ Աւրանը գնել...

Այժմեան Բաղչէն կը պահէ տակաւին հայկական հեթանոսութեան և մանաւանդ քրիստոնէութեան զօրաւոր հետքեր ու պատմական նշաններ: «Բախչի խաչեր» ըսուած անտառային ձորակը նշանաւոր ուխտատեղի է հայերուն համար, թէև հայերը առ ահի շատ անգամ չեն կարող կատարել իրենց կրօնական ուխտը...

«Բախչի խաչերու» ուրոյն շրջանի անտառն և անմատչելի աղբիւրակներու թուփն անգամ, կրօնական ըմբռնումով, անձեռնմխելի է նոյնիսկ տեղացի քիւրդերու համար, և այդ հմայքի շնորհիւ ցարդ դարաւոր կաղնիներ հանգիստ կը թագաւորեն անտառներուն այդ կոյս մասին մէջ:

Բաղչէին անմիջապէս կից կը մնայ տակաւին հայոց հին հոյակապ գերեզմանատունը, մեծ անշարժելի տապանաքարերով և կոտրտուած խաչքարերով: Ապագայի պեղումները թերևս աւելի լոյս սփռեն մեր այս հակիրճ ծանօթութեան վրայ:

Բաղչէէն կէս ժամ հեռի, դէպի արևելք, նոյն Քարկէ լեռան շղթայի վրայ կը գտնուի Աշտիշատի աւերակ մենաստանը, ուր էին Վահեվահեաց և Վահագնի բագինները և ուր այժմ կը հանգչի ս. Սահակ հայրապետի գերեզմանը, իր կիսաքանդ փոքրիկ ու անշուք մատուռով: Այդտեղ տեղացիք ու շրջակայ տարօնցիք տարին 2—3 անգամ ջերմեռանդութեամբ խուռներամ կը դիմեն ուխտի...

Աշտիշատի կից է Դիրբէք անուն փոքրիկ հայ գիւղը, մէկ քահանայով և առանց դպրոցի: Այդ գիւղի շինականներն ալ վերին աստիճանի թշուառութեան մէջ են, ենթակայ քիւրդական և կառավարական անվերջ զուլումներուն ու հայաջինջ հալածանքին:

Թախիծ

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

—o—

ՀԱՅՈՑ ՀԱՐՑԻ ՔՆՆՈՒԹԻՒՆԸ*)

(Նիստը շարունակվում է Վօլկօնսկիի նախագահութեամբ)

Ստենօգրաֆիական հաշիւ յունիսի 6-ի նիստի

Պապաջանեանի ճառի շարունակութիւնը

(Բագուի, Գանձակի և Երևանեան նահանգների պատգամաւոր)

Հայերը, անցեալ անգամ ես այս ամբիոնից յայտարարեցի, երբեք չեն փնտռել Ռուսաստանում ոչ մի այլ բան, որ չը պատկանէր այլ ազգութիւններին, բայց նրանք ցանկանում էին, որ վերջնականապէս հաստատվէր մի դրութիւն, որ նրանք Կովկասում, ինչպէս և այլ ազգութիւններ, չեն որոնում պատակտումն Ռուսաստանից: (Ձայներ աջից՝ «բրավօ»): Մենք չենք փնտռում պարոնայք, արտօնութիւններ, բայց մենք ցանկանում ենք, որ մի անգամ ընդմիշտ սպառուէր ու հաստատվէր, թէ չը կան սեպարատիստական ձգտումներ, և թէ հայերը ցանկանում են Ռուսաստանում լինել հէնց այն, ինչ էլ միւս ազգութիւնները ոչ միայն Կովկասի, այլև ամբողջ Ռուսաստանի, կամենում են ապրել ընդհանուր քաղաքացիական կեանքով և, երբ որ հարկաւոր էլ կը լինի այդ յանուն Ռուսաստանի շահերի, դնել նաև իրանց կեանքը նրա համար: (Աջից ծափահարութիւններ և ձայներ՝ «բրավօ»): Այդպիսով, երբ ոչնչանում են մեղադրանքները ազգութիւններից մէկի վերաբերմամբ, երբ դադարում են թունաւորել այդ ազգութիւնը և պահել առանձին դրութեան մէջ, նրա ներկայացուցիչները արդէն կարող են լի հանգստութեամբ ճառել ներքին քաղաքականութեան բոլոր հարցերի մասին, ինչպէս ճառում են բոլոր ռուս քաղաքացիները: Սակայն, ես վերադառնում եմ հայկական հարցի նշանակութեան և Ռուսաստանի դէպի նա ունեցած վերաբերմունքի մասին շօշափած խնդրին: Այն օրից ի վեր, երբ Ռուսաստանը հաստատվեց Կովկասի սահմաններում, ինչպէս և նրանից առաջ, հայերը բնականաբար ծանրանում են Ռուսաստանի կողմը: Ես կարծում եմ, որ [illegible] է ընդունեն բոլորը, թէ նրանց ծանրացումը միանգամայն բնական է: Այն սարսափից յետոյ, որը ապրեցին հայերը Թիւրքիայում և Պարսկաստանում, նրանք, ի հարկէ, փրկութիւն էին որոնում Ռուսաստանի սահմաններում, հէնց այն Ռուսաստանի, որը քարոզում է, ինչպէս և նրանք, միևնոյն քրիստոնէական կրօնը: Բայց հայերի ծանրացման հետ մէկտեղ Ռուսաստանի կողմը, այդ ծանրացումով, որը հէնց այնպէս հասկանալի է, ինչպէս և մուսուլմանների վերաբերմունքը դէպի սահմանի այն կողմի հաւատակիցները, երևան է գալիս Թիւրքական կառավարութեան դէպի նրանց թշնամական վերաբերմունքը: Դեռ 1828—1829 թւականներից, երբ առաջին անգամ նուաճվեցին Երևանի և Նախիջևանի խանութիւնները, փոխվում է Թիւրքերի վերաբերմունքը դէպի հայերը, որոնց մէջ Թիւրք կառավարութիւնը տեսնում է վտանգաւոր էլէմենտ: Հայերը կռւում են, ինչպէս կարող են. նրանք մանրամասն տեղեկութիւններ են հաւաքում բռնութիւնների և թալանների մասին և ներկայացնում են կառավարութեան: Կ. Պոլսի ազգային ժողովը այդ լուրերից երկու հաշիւ կազմեց, երկու հսկայական աշխատանք, և 1870 ու 1876 թ. թ. ներկայացրեց Թիւրքական կառավարութեան: 1850 թ. բռնութեան բոլոր փաստերը բերված էին նրա մէջ: Թիւրքական կառավարութիւնն այն ժամանակ արդէն խրացրել էր դէպի հայերը այն վերաբերմունքը, որը նա մեծ եռանդով երևան հանեց աւելի ուշ: Նա հիմնեց յատուկ յանձնաժողով, որը ոչինչ չարաւ, և նոյնիսկ հաշւետուութիւնները մոռացվեցին: Այդպիսի դրութեան մէջ էին հայերը, երբ մօտեցան 70-ական թւականները: 1876 թւին պատրաստվում է Ռուսաստանի ընդհարումը Թիւրքիայի հետ, և մեծ թափով արտայայտվեց հայերի ծանրացումը Ռուսաստանի կողմը: Այդ նմանապէս խթան հանդիսացաւ Թիւրքական կառավարութեանը նրա համար, որ ցոյց տայ հայերին իր նախկին վերաբերմունքը աւելի մեծ ջանասիրութեամբ: 1877—1878 թւականների պատերազմը վերջացաւ Կարսի և Բաթումի Ռուսաստանին միանալովը: Կարսը հայկական տերրիտօրիայի մէկ մասն է: Այդ պատերազմի ժամանակ բնական էր, որ Հայաստանում տեղական բնակիչներն արդէն չը կարողացան դասողութեան ենթարկել, թէ ինչպէս է հարկաւոր իրանց գործել. նրանց հարկաւոր էր դուրս փախչել այն դժոխքից, որը նրանց համար էր ստեղծված. բնական է՝ համակրութիւնը, որը արտայայտեցին նրանք ռուսական զօրքերին, դուրս գալով նրանց առաջ խաչերով ու խաչվառներով և ցոյց տալով օգնութիւն համաձայն իրանց ոյժերի: Յայտնի է, թէ ինչով պատասխանեցին հայ ժողովրդին Թիւրքական իշխանութիւնները: Դուք, հաւանօրէն, յիշում էք այդ պատերազմի պերիօդից Բայազէտի վրա յարձակումը: Դրա հետևանքն էր գեներալ Տէր-Ղուկասեանի հրամանատարութեան տակ գտնվող ռուսական յետ նահանջող զօրքերի հետ միասին 3000 ընտանիքների գաղթը Ռուսաստան. դուք գիտէք, թէ յետոյ ինչպէս կործանարար էին Ուբէյդուլլա և Ջալալէդդէն շէյխերի ասպատակութիւնները, որոնք արիւնով ներկեցին ամբողջ երկիրը: Դրանից յետոյ բնական են Ռուսաստանի ներկայացուցիչ կոմս Իգնատև ջանքերը՝ յետագայ հովանաւորութիւնը իր ձեռքը վերցնել։ Այդ ձգտման հետեանքն էր Սան-Ստեֆանոյի դաշնագրի 16-րդ յօդուածը, որի մասին յիշատակեց Պետական Դումայի անդամ Միլիւկովը։ Այդ յօդուածի էական մասը կայանում էր նրանում, որ Ռուսաստանն իրաւունք էր ստանում դուրս չը հանել իր զօրքերը Թիւրքահայաստանից մինչև այն ժամանակ, քանի այնտեղ կարգ ու կանոն չի հաստատվի։ Բայց այն դրութիւնը, որը ստեղծվեց այն ժամանակ և որը Ռուսաստանին պատասխանատու դարձրեց Թիւրքահայաստանում յետագայ կարգ ու կանոնի համար, շուտով փոխվեց։ Անգլիան, յանձին լորդ Սոլսբերիի, ամենից առաջ իրաւունք ձեռք բերաւ Ռուսաստանի հետ հաւասարապէս մասնակցել Թիւրքահայաստանում ռէֆօրմներ մտցնելու գործում, իսկ այնուհետև յաջորդեց Բերլինի յայտնի դաշնագիրը։ Այդ դաշնագրութեան 61-րդ յօդուածով փոխարինվում է Ռուսաստանի արտօնութիւնը, և հայկական հարցն այդ մոմենտից կորցվում է Ռուսաստանի ձեռքից և յանձնվում պետութիւնների կօնցերտին, այսինքն մուծվում է շփումների շրջանը, այն սֆերան, որը առաջ է բերում միայն անկարգութիւններ և չը կարողացաւ ոչ մի դրական հետեանք խոստանալ։ (Ձայներ աջից՝ «բրավօ, բոլորովին ճիշդ է»)։ Այդպիսի դրութեան հետեանքը շատ պարզվեց։ Թիւրքական պատերազմի վերջանալուն հետ միասին մի շարք միջոցներ ձեռք առնվեցին նրա համար, որպէս զի հնարաւորութիւն չը լինէր նորից հայկական հարց ծագցնել։ Աբդիւլ Համիդի կառավարութիւնը ձեռք առաւ ամեն տեսակ միջոցներ այն նպատակով, որպէս զի վտանգաւոր հայ էլեմենտի ֆիզիքական բնաջնջման ուղիով վերացնէր հերթից նաև հայկական հարցը։ Եւ այդ առիթով նրանց ձեռք առած միջոցները գրեթէ փոխեցին, գրեթէ թաղեցին այդ հարցը, աչքի ընկնող քանակութեամբ պակասեցնելով Հայաստանի ազգաբնակութիւնը։ Եւ ձեռք առած ամենամօտ միջոցը վիլայէթների նոր դասաւորումն էր։

---

*) Տես «Մշակ» № 142.

(Կը շարունակվի)

են Սոլունում յոյների բուլղար զօրամասի նկատմամբ գործած վարմունքի դէմ, պատասխանեց, որ սլաւօնական հասարակական կարծիքը միաբերան դատապարտում է յոյների բարբարոս վարմունքը, բայց աւելի մեծ վշտով պարսաւում է բուլղար կառավարութեան յանցաւոր վարմունքը, որ առաջ բերեց եղբայրասպան պատերազմ։

—

Բէլգրադ.—«Պրէս Բիւրօն» հաղորդում է, որ Բէլգրադի ռուսաց դեսպան Հարտվիգը, իր կառավարութեան յանձնարարութեամբ, Ցետինէում և Աթէնքում քայլեր արաւ, որպէսզի պատերազմական գործողութիւնները դադարեն և կռւող կողմերը ձեռնարկեն խաղաղ բանակցութիւնների։

—

Աթէնք.—Աթէնքի գործակալութիւնը տեղեկացնում է, թէ, լուրերի համաձայն, առաջիկայում տեղի է ունենալու Վէնիզէլոսի և Պաշիչի տեսակցութիւնը Նիշում։

ՌՈՒՄԻՆԱԿԱՆ ԶՕՐՔԸ ԲՈՒԼՂԱՐԻԱՅՈՒՄ

—

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

1 յուլիսի

Սօֆիա.—Բուլղարական գործակալութիւնը հաղորդում է, որ ռումինական հեծելազօրը մտաւ Սիլիստրիա, Դոբրիչ, Բալչիկ և շրջակայ գիւղերը։

—

Վիէննա.—«Միլիտէրիշէ - Րունդշաու»-ն հաղորդում է, որ Կօրաբիայից դէպի հիւսիս ընկած շրջանում կենտրօնանում են մեծաքանակ ռումին զօրքեր։

—

Բուխարէստ.— Տեղիս բուլղարական դեսպանը միսիայի ամբողջ կազմով այսօր արագ գնացքով մեկնեց Ջուրջէվօ, որտեղից կանցնէ Ռուշչուկ։

ԲԱԼԿԱՆԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

ԵՂԲԱՅՐԱՍՊԱՆ ԿՌԻՒՆԵՐ

—

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

1 յուլիսի

Սօֆիա.—Բուլղարական գործ.-ը հաղորդում է. «Բուլղարական գլխաւոր բանակից ստացված տեղեկութիւնների համաձայն, յոյն և սերբ զօրքերի դէմ գործող բուլղարական զօրքի սկզբնական նպատակը կայանում էր նրանում, որպէս զի գրաւեն թիւրքաց բանակից ազատված երկիրը, և որը վիճելի հարցերի կանոնաւորման ժամանակ պէտք է անցնէր բուլղարներին, և պաշտպանեն բուլղարական թագաւորութեան հողը սերբ զօրքերի հնարաւոր արշաւանքից։ Բուլղարական գլխաւոր շտաբը զօրքերը կենտրօնացնելիս ղեկավարվում էր միմիայն այդ նկատումներով, չունենալով բնաւ ագրեսիվ մտադրութիւններ։

«Պատերազմական գործողութիւնների սկզբից մինչև յուլիսի 1-ը սերբ զօրքերի գրոհի առաջն առնում էր միայն բուլղարական եօթերորդ զօրաբանակը, որ ամբողջ տասն օր իր յոյսը բացառապէս իր սեփական ուժերի վրա էր դրել։ Նա պատւով ու արիաբար դուրս եկաւ այդ անհաւասար կռւից և մինչև օրս շարունակում է երկրի մէջ պահել յամառութեամբ յարձակվող հակառակորդին։

«Մնացած բուլղարական զօրամասերը ոչ մի լուրջ գործողութեան մասնակից չեղան, բացի սուրալուց, որ կատարվեց գեներալ Կուտինչեվի ղեկավարութեամբ, որ գրաւեց Կնեաժէվացը և արդէն սպառնում էր Պիրոտին, բայց զուտ քաղաքական նկատումներով հարկադրված էր հեռանալ սերբիական թագաւորական հողից։

«Յունաստանի դէմ գործում էին բուլղար զօրքի միայն թոյլ ուժերը գեներալ Իվանովի հրամանատարութեամբ, որ պաշտօն ունէր սոսկ ինքնապաշտպանողական դիրք բռնել։ Բուլղարական թոյլ ուժերը 10 օր անսովոր հերոսութեամբ դիմադրեցին սերբերի արշաւանքներին՝ քանդելով յոյների և սերբերի միացեալ յարձակման ծրագիրը, որի իրականացմամբ բուլղարական չորրորդ զօրաբանակը իցէ թէ իսպառ ոչնչանար։ 20,000 բուլղար զինւոր թնդանօթների պաշտպանութեամբ կանգնեցրին յոյն զօրքերի արշաւանքը. այդ ժամանակ մնացած բուլղար զօրքերը գրաւեցին մի քանի դիրքեր։ Գեներալ Իվանովի զօրքը ներկայումս գրաւում է շատ լաւ դրութիւն և պատրաստ է խորտակել յոյն զօրքի յուսահատ ջանքերը։

«Սերբերը ոչ միայն չեն առաջացել, այլ, ընդհակառակն, մի քանի կէտերում ստիպված եղան նահանջել։ Յոյները ամբողջ 10 օրվայ ընթացքում առաջացել են ընդամենը 30 կիլօմետր, կրակի ու սրի մատնելով իրանց նուաճած երկիրը։ Այդպիսով բուլղար զօրքերի պարտութեան լուրերը հանդիսանում են սուտ»։

ԵՂԲԱՅՐԱՍՊԱՆ ԿՌԻՒ ԱՌԻԹՈՎ

—

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

1 յուլիսի

Լիւբլիանա.—Նախկին քաղաքագլուխ Գրաբարը բուլղար հասարակական գործիչների հեռագրին, որոնք բողոքում

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

1 յուլիսի

Կ. Պօլիս.—Ստացված տեղեկութիւնների համաձայն, Չաթալջայի զօրքերի մեծ մասը դէմ է նոր ռազմի գործողութիւններին։ Օֆիցերները բողոքում են, մատնանշելով որ նրանց ընտանիքների վիճակը շատ վատ է։ Վերջին ռոճիկները տրվեցին մարտին։

Քաղաքում նոր զօրահաւաք է։ Մնացած ձիերը, սայլերը և անասունը յարքունիս են գրաւվում։

Թիւրքիան Յունաստանից պահանջում է վերադարձնել Միտիլէնա, Քիոս, Լէմնոս կղզիները։

—

Սօֆիա.—Թիւրք և բուլղար կառավարութիւնների փոխադարձ համաձայնութեամբ յունիսի 30-ից բուլղարական զօրքերը հեռանում են Էնոս-Միդիա սահմանագծից այն կողմը գտնվող տեղերից, որոնց վերստին տիրանում են թիւրքերը։

—

Պարիզ.—Պուանկարէն Լօնշանում զօրադիտում կատարեց, որից յետոյ դիմեց զօրքին հայրենասիրական ճառով։ Հանդէսն անցաւ ընդհանուր խանդավառութեան մէջ և «Կեցցէ՛ զօրքը, կեցցէ՛ Պուանկարէն» բացագանչութեամբ։

—

Խանկօու.—Ցզինցզեանի տակ սկսված ճակատամարտը շարունակվում է։ Հիւսիսային զօրքերը ձեռնարկում են քաղաքի պաշարման։ Հիւպատոսները վճռեցին զօրամաս ուղարկել օտարազգիների պաշտպանութեան համար։

—

Լօս-Անջէլոս (Կալիֆօրնիա).—Երկու գնացքների ընդհարման ժամանակ սպանվեցին 12 էկսկուրսանտներ, վիրաւորվեցին 50 հոգի։

ԿՆԱՆՔԸ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԷՋ

—

Ուստր, 19 յունիս (Ն. տ.)

Տնտեսական կեանքի պայմանները այս երկրի չորս կողմերն ալ կամաց-կամաց դժուարանալ կը սկսին, կարգ մը քաղաքական խնդիրներու ու ծրագիրներու արմատական փոփոխութեանց կառավարական հետապնդումին համար։ Ուիլսընի վարչութիւնը՝ նախկին նախագահ Թէֆթի օրով սկսուած թրըսթները լուծելու գործը նոր թափով մը շարունակելէ զատ՝ ձեռք առած է մաքսային հարցը, որ ամիսներէ ի վեր կը յուզուի Վաշինգտոնի մէջ և տակաւին իր վերջնական լուծումը գտած չէ։ Մաքսային հարցը այնպիսի կարևոր և ծանրակշիռ խնդիր մըն է, որ Ամերիկայի Միացեալ-Պետութիւնները հիմնովին ցնցելու կասկածներ կը ներշնչէ հասարակութեան, կապուած ըլլալով [illegible] ներքին ու արտաքին առևտրական կեանքին հետ։ Այս հարցը ներքնապէս սարսափ կազդէ երկրին բոլոր արդիւնաբերական ընկերութեանց, անոր համար, որ մաքսային նուազումը եւրոպական մրցակիցներ պիտի շատցնէ և հրապարակը լեցնէ աժան ապրանքներով, պարագայ մը՝ որմէ ազատ մնացած էր ցարդ այս երկիրը թարիֆի անհամեմատօրէն բարձր գնոյն համար, որմէ գործարանատէրեր կրցած էին օգտուիլ և շարունակ բաց պահել իրենց դռները բանուոր դասակարգին առջև։ Իսկ այժմ վախը արդէն ինկած է գործատիրոջ սրտին մէջ, որուն հետևանքով այսօր հազարաւոր բանուորներ աշխատանքէ դուրս կը մնան, զրկուած ըլլալով և կանոնաւոր ապրուստէ։

Ասկէ զատ՝ պայքար մը կայ գործաւոր դասակարգին և կապիտալիստին միջև, պայքար մը, որ երկու տարիներ առաջ գրեթէ գոյութիւն առաւ ու դեռ կը շարունակուի հետզհետէ աւելի սուր և չեշտող հանգամանքով։

«Միջազգային բանուորական կազմակերպութիւն» անունին տակ գործաւորներ գրեթէ ամեն կողմ կազմակերպուելով՝ գործադուլներ կը սարքեն, բաւարարութիւն պահանջելով օրավարձերու յաւելումի և այլ պայմաններու մասին։ Շատ տեղեր յաջողած է այս բանուորական կազմակերպութիւնը իր գործադուլներուն մէջ, բայց քաղաքներ կան, ուր գործատէրեր անդրդուելի մնացած են իրենց պայմաններուն վրայ և տեղի տուած չեն երբէք, մերժելով նոյնիսկ կառավարութեան՝ վիճելի խնդիրը իրաւախոհական միջոցներով կարգադրելու՝ ազնիւ առաջարկը։

Փաթըրսընի (Ն. Ճ.) մետաքսի բոլոր գործարանները երեք ամիսներէ ի վեր է, որ գործադուլ ըրած են և տակաւին կը շարունակեն։ Հազարաւոր մարդիկ սոսկալի թշուառութեան մատնուած են, իրենց ամբողջ ընտանիքներով։ Ասոնց մէջ կան 300-ի մօտ հայեր, որոնք նոյնպէս թշուառութեամբ կը տառապին։

Հայ գաղութներ հանգանակութիւն սկսած են վերոյիշեալ ազգայնոց ամենադոյզն օգնութիւն մը հասցնելու համար։ Այս վիճակին մէջ կը գտնուի Միլֆըրդ քաղաքը, ուր ևս շատ մը հայեր կը գտնուին։ Այսպէս են և շատ մը ուրիշ քաղաքներ, պայքար կապիտալիստին և բանուորին միջև, բուռն և յուսահատական պայքար։

Երևոյթները այնպէս կը ցուցնեն մեզ, թէ սոյն լարուած դրութիւնը երկուքին միջև շուտով շտկուելու հաւանականութենէն հեռի է, ընդհակառակը՝ ալ աւելի ծաւալելու և վատթարանալու հակամէտ կը դառնայ։ Ու այս պայմաններուն տակ կրնաք երևակել, թէ ի՞նչ դժոխային է գործաւոր դասակարգին առօրեայ կեանքը, որ հասարակ կերպով քարշ տալու համար աշխատութեան պէտք ունի ու անկէ զրկուած կը մնայ։

Յուսահատ բանուորներու բանակը կառավարութեան կը դիմէ պաշտպանութեան համար ու անկէ ալ օգնութիւն չստանար։ Կառավարութիւնը գործատէրերու շահերը կը պաշտպանէ աւելի քան բանուորներուն, ու սակայն շատ յայտնի նկատումներով։ Ահա այս է օրուան կացութիւնը, որուն ենթարկուած կը մնայ Ամերիկան։

Մաղաք Գ. Պէրպէրեան

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱԼԷՔՍԱՆԴՐՕՊՕԼԻ ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍ-ՏՕՆԱՎԱՃԱՌԸ

—

Ալէքսանդրօպօլ, 28 յունիսի

Ամսիս 27-ին ցուցահանդէսը պաշտօնապէս բացվեց, փակվելու է 29-ին։

Ցուցադրված անասունների, թռչունների և երկրագործ. մեքենաների փորձերը կատարվեցին իրանց ժամանակին. նրա բաժինները հետևեալներն էին.

I բաժին—կաթնատու անասուններ՝ կովեր, մատակ գոմէշներ։

II բաժին—բանող անասուններ՝ եզներ, գոմէշներ։

III բաժին—ձիեր ամեն տեսակի և ջորիներ։

IV բաժին—ոչխարներ, այծեր, խոզեր։

V բաժին—թռչուններ։

VI բաժին—մեղուաբուծութիւն։

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

—o—

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ԿԱՐԾԻՔԸ

—

Ֆրանսիայի նշանաւոր պետական գործիչ Ժորժ Կլէմանսօյի խմբագրութեամբ հրատարակվող «L'Homme Libre» («Ազատ Մարդը») նոր քաղաքական թերթի յունիսի 5-ի համարում «Pour l'Arménie» («Հայաստանի համար») վերնագրով մի սիւնակ ամբողջովին նուիրված է Թիֆլիսցիներին և հայ ինտելիգենցիային յայտնի բժշկապետ Յովհաննէս Լորիս-Մելիքեանին, որ ներկայում այստեղի պաստերեան ինստիտուտում պրոֆ. Մեչնիկովի մօտ աշխատողներից մէկն է։

Բժշկապետ Յ. Լորիս-Մելիքեանը երկար ժամանակ Թիֆլիսում հասարակական և ազգային գործիչ էր, ապա անցաւ այստեղ, ուր վարում էր «Pro Armenia» թերթի խմբագրութիւնը, յետոյ անցաւ Պետերբուրգ, ուր պրոֆ. Մ. Կովալեվսկիի ձեռքով հրատարակվող «Страна» թերթի խմբագրութեան քարտուղարն էր։

Բժ. Յովհ. Լորիս-Մելիքեանը «Դաշնակցութիւն» հայկական կուսակցութեան եռանդուն անդամներից մէկն էր այն ժամանակ, երբ այդ կուսակցութեան միակ ծրագիրը՝ ազգային մեծ դատի պաշտպանութիւնն էր. բայց երբ նա շեղվեց իր ծրագրից և այդ առիթով պառակտումներ առաջ եկան կուսակցութեան մէջ, բժշկ. Լորիս-Մելիքեանն ևս ստիպվեց հրաժարվել մասնակցութիւնից։

Մենք, ի հարկէ, չենք մտնում բժշկ. Յ. Լորիս-Մելիքեանի գործունէութեան մէջ, որ կարող է ունենալ և թերի, սխալ կողմեր, ինչպէս՝ օրինակ՝ այն միջադէպը, որ պատահեց յարգելի գործիչ Մ. Ջերպալի հետ. բայց յամենայն դէպս, քանի որ Ֆրանսիացի այնպիսի ականաւոր գործիչներ, ինչպէս Ժորժ Կլէմանսօ, Ֆրանսիս Պրէսանսէ, Վիկտոր Բէրար, Անատօլ Ֆրանս և Ժան Ժօրէս արժանի գրուատանքն են տալիս բժ. Յ. Լորիս-Մելիքեանի գործունէութեան, մենք կարծում ենք, որ իրաւունք չը կայ անգիտութեան տալ այդպիսի մի մեծարանքը։

Ուստի և առաջ ենք բերում այդ վկայութիւնները «L'Homme Libre» թերթի առաջաբանով, «Յարգանք պ. Լորիս-Մելիքովին» վերնագրով։

«Մեր բարեկամներից նրանք, որոնք հետևել են փոքր-ինչ ուշադրութեամբ Հայաստանի դէպքերին, անգիտակ չեն, անշուշտ, պ. Լորիս-Մելիքովի անձնաւորութեանը, որ եղաւ «Pro Armenia»-ի հիմնադիրը Պիէր Քիյարի հետ։ Նրան է ընկնում պատիւը՝ գրաւելու դէպի դժբաղդ ժողովուրդը քաղաքակիրթ Եւրոպայի համակրութիւնները։

«Երկար ժամանակից ի վեր պ. Լորիս-Մելիքովը քաշվել է գործունեայ պայքարից, և նրա բարեկամները վշտանում էին։ Հետևեալ նամակները բացատրում են լռութիւնը, որին դատապարտել է իրան մեր բարեկամը։ Մենք մաղթում ենք, որ նրա հայրենակիցները վերադարձնեն պ. Լորիս-Մելիքովին այն արդարադատութիւնը, որ պարտական են նրան, և այն վստահութիւնը, որին նա արժանի է իր անցեալով»։

—

Պարիզ, 30 մայիսի 1913

Իմ սիրելի Լորիս-Մելիքով,

Երբ ես իմացայ Վիկտոր Բէրարի հետ այն գործը, որ հիմնվեց և ղեկավարվեց մեր անմոռանալի բարեկամ պ. Քիյարի ձեռքով, ի նպաստ հայ ժողովրդի և խաղաղութեան Արևելքում, ես ցաւում եմ, որ հանգամանքները մեզ թոյլ չէին տալիս խնդրել ձեր անձնուէր աշխատակցութիւնը, որը դուք նոյնքան տրամադիր կը լինէիք մեզ շնորհել, ինչպէս տրամադիր եղաք աջակցելու Քիյարին։ Մի բաժանումն է տեղի ունեցել ձեր և մեր այն հայ բարեկամների միջև, որոնք հարկաւոր դատեցին «Pro Armenia»-ի վերսկսումը։

Ժամանակին ես ծանօթացայ այդ բաժանման պատճառների հետ, ես իմացայ, ինչպէս և կարող էի գուշակել, որ ոչ մի ստուեր այդ ներքին պօլեմիկների մէջ չէ կարող շօշափել ձեր պատիւը կամ ձեր փափկանկատութիւնը։ Քաղաքական կամ վարչական կարգի տարաձայնութիւններ՝ վերաբերեալ մեթօդի կամ տակտիկայի կէտերին՝ կարողացան առաջ բերել ձեր առանձնացումը, բայց նրանք չէին կարող ոչ ամենափոքր հարուած հասցնել հայկական հարցին անձնուէր զինւորականի պատւին, ոչ էլ պակասեցնել ձեր լօյալ ցանկութիւնը նուիրելու ձեր երկրին, ինչպէս միշտ արել էք, ձեր ուժերը, ձեր միջոցները և ձեր կեանքը։

Հաւատացէք, խնդրում եմ, իմ լաւագոյն զգացումներին։

Ֆրանսիս դը Պրէսանսէ

⁂

Պարիզ, 31 մայիսի

Իմ սիրելի բարեկամ Լորիս,

Դուք գիտէք, որ ես միշտ ծառայել եմ հայկական հարցին, առանց կամենալու խառնվել երբէք անձնաւորութիւնների հարցերի կամ վարչական կօմբինացիաների մէջ։ Բայց դուք գիտէք նոյնպէս, որ բոլոր հայերից, որոնց հետ ինձ վիճակվել է աշխատակցել, չը կայ մէկը, որին այնքան սիրէի և յարգէի ինչպէս ձեզ, իմ սիրելի բարեկամ, այն ևս մօտ 17 տարվայ գրեթէ հանապազօրեայ աշխատակցութիւնից յետոյ. չը կայ մէկը, որի համար ճանաչէի արժանիքը աւելի ազնուաբար, աւելի արիաբար և աւելի անշահասէր սրտով ծառայած լինել ձեր ժողովրդի իրաւունքների և կեանքի համար։ Ես աշխատել եմ ձեզ ապացուցանել իմ զգացմունքս ամեն պատահած առիթով. ես միշտ ասել եմ հրապարակօրէն այն, ինչ որ այսօր գրում եմ ձեզ, և ես առիթ եմ որոնում մի անգամ ևս կրկնելու։

Ձեր Բէրար

⁂

Պարիզ, 2 յունիսի

Իմ սիրելի Լորիս,

Խմբագիր «Pro Armenia»-ի, իր հիմնարկութեան օրից, ես ձեզ տեսել եմ գործի վրա և ես մօտից հետևում եմ ձեր ջանքերին։ Ես գիտեմ, թէ որքան մեծ է եղել, տակաւին, իրական ձեր գործունէութիւնը ի նպաստ մարտիրոս Հայաստանի։ Ձեզ տեսել են Պարիզում, Լօնդօնում, Նիւ-Եօրքում, Հռօմում պաշտպանելիս մի անխոնջ եռանդով և ամենահամոզեցուցիչ ճարտասանութեամբ ձեր վեհեցիկ և թշուառ հայրենիքի դատը և աշխատելիս, որ ամբողջ աշխարհը հետաքրքրվի ձեր վիճակով։

Դուք արժանի էք կացուցել ձեր անձը ձեր հայրենակիցների երախտագիտութեան։ Իմ կողմից, ես միշտ երջանիկ և հպարտ կը լինեմ մրցել ձեր կողքին այդ այնքան ազնիւ դատի համար, որին դուք նուիրել էք ձեր կեանքը։

Սեղմում եմ սրտագին ձեր լօյալ ձեռքը՝

Անատօլ Ֆրանս

⁂

Պարիզ, 3 յունիսի

Իմ սիրելի Լորիս-Մելիքով,

Ես ստորագրում եմ Անատօլ Ֆրանսի վերոգրեալ ամեն մի խօսքին։

Ժ. Կլէմանսօ

⁂

Իմ սիրելի Լորիս-Մելիքով,

Ես ընկերանում եմ բոլոր նրանց, որոնք ձեզ տեսել են գործի վրա, և վկայում եմ այն հիանալի և յարատև ջանքերի մասին, որ դուք արել էք ձեր ժողովրդին ի նպաստ։ Անձնապէս, ես կարող եմ ասել, որ ես մանաւանդ ձեզ եմ պարտական, որ իրազեկ եղայ նրան սպառնացող վտանգներին և այն քայլերին, որոնք կարող էին ծառայել նրան։ Եւ այն յարգանքն, որ մենք ամենքս ունէինք ձեր բնաւորութեան լօյալութեան, ձեր հայրենասիրական վշտի անկեղծութեան, ձեր անշահախնդիր գործունէութեան ազնուութեան համար, սաստկայնում էր համակրանքը դէպի տանջանքները այն ժողովրդի, որի դատը դուք այնքան լաւ պաշտպանում էիք։ Ես ջերմագին փափագում եմ, այն նոր փորձանքների նախօրեակին, որոնք սպառնում են գուցէ Հայաստանին, և որպէս զի նա կարողանայ ազատվել մի անգամից քիւրդական բարբարոսութեան սպառնալիքներից և կարծեցեալ փրկիչների որոգայթներից, որ ձեր գործունէութիւնը կարողանայ կատարվել աւելի ազդուօրէն։

Ձեր՝ Ժան Ժօրէս

⁂

Ֆրանսիական «L'Homme Libre» թերթի մէջ այս նամակները տպվելուց յետոյ ռուս գործիչ պրոֆ. Մաքսիմ Կովալեվսկին հետևեալ յօդուածն է գրել «Русское Слово» թերթի մէջ՝ «Հայկական շարժման անցեալը Եւրոպայում» վերնագրով.

«Յամօթ մարդկութեան, դեռ կարող են յանկարծակի նորից կանգնել մեր առջև այնպիսի հարցեր, ինչպիսին հայկական հարցն է։ Անունը խաբուսիկ է։ Խնդիրը հայկական թագաւորութիւն ստեղծելու մասին չէ, ոչ էլ հայկական կուլտուրան խրախուսելու մասին, այլ սոսկ նրա մասին, որ ապրեն հայերը, որ բնաջինջ չը լինեն իրանց հարևան քիւրդերից։ Իր ամբողջ կոպտութեամբ ու անմիջականութեամբ դրվում է այն ապրելու իրաւունքի հարցը, որի մասին դեռ ևս ասում են անգլիական գաղթականները Հիւսիսային Ամերիկայում իրանց անկախութեան դեկլարացիայում, բայց որի մասին այլ ևս ոչ մի յիշատակութիւն չը կայ այն հիմնադիր ժողովի արձանագրութիւնների մէջ, որը կազմել է մարդու և քաղաքացու անբռնաբարելի իրաւունքների մի ամբողջ ցուցակ։ Ապրելու իրաւունքի մասին մեր օրերում, թւում էր թէ, խօսք լինել չէ կարող այնպիսի պետութիւնների մէջ, որոնք արդէն խզել են իրանց կապերը բռնակալութիւնից և կրօնական բացառիկութիւնից, որոնք անցել են ներկայացուցչական կարգերին ու պարծենում են իրանց սահմանադրութեամբ։ Մինչդեռ, այդ հարցը այսօր-էգուց կարող է լուծումն ստանալ արեան բաղնիքով Անատոլուի արևելեան մասի 1.200,000 ազգաբնակութեան համար։

«Այդ արեան բաղնիքը իր զոհերի բազմութեամբ կը գերազանցէ թէ «Սիցիլիական երեկոներից», թէ «գեօզերի» դէմ դուքս Ալբայի գործադրած միջոցներից, թէ «Բարդուղիմէոսեան գիշերից», թէ Լուդովիկոս XIV-ի դրագօնադներից և թէ հրէական ջարդերից։ Բաւական է միայն յիշել, թէ ինչքան արժեցաւ հայ ազգին վերջին 40 տարում քիւրդերի մոլեռանդութիւնը և թիւրք կառավարութեան մաքիավելութիւնը։ 1876 թւին Ներսէս պատրիարքը մատնանիշ էր անում Բ. Դռանը, որ քիւրդերի ջարդերից տուժել են 258 գիւղեր, 32 վանքեր և 3 քաղաք, որոնց հողերը աւերել էին հարևան բէյերը։

«Բեռլինի դաշնագիրը ստորագրելուց ան-

VII բաժին—բուսաբուծութիւն և երկրագործական գործիքներ։

VIII բաժին—անասունների կեր և տակը փռուածք պատրաստելու գործիքներ և մեքենաներ։ Բուսական և կենդանական կերերի տեսակներ։ Անասնաբուծութեան վերաբերեալ գործիքներ և մեքենաներ։ Գիտական և փորձա-ցուցական բաժին։ Կենդանաբուծական արդիւնաբերութիւններ։

IX բաժին—տնայնագործական-արհեստագիտական։

Անասունները տեղաւորված են «էչմիգալ» կոչվող տեղի 2 ընդարձակ բակերում, իսկ միւս իրերը Առևտրական դպրոցի սրահներում։

Բժիշկների և բնագէտների XIII համագումարի անդամների, օտար տեղերից եկած ներկայացուցիչների և ուրիշ հիւրերի համար քաղաքը պատրաստել է սենեակներ՝ Առևտրական դպրոցի շինութեան մէջ։

Ցուցահանդէսում բացված է բուֆէտ՝ չափաւոր գներով։

Առաջին օրվայ զբաղմունքները կատարվեցին հետևեալ կարգով.

Նախ՝ առաւօտեան կայացաւ ցուցադրելիք իրերի ընդունելութիւնը և դասաւորելը։ Ապա՝ ժամը 1-ին՝ անասնաբուծական ցուցահանդէսի բացումը յայտարարվեց մաղթանքի արարողութիւնից յետոյ։ Այնուհետև քաղաքագլուխ Կ. Պ. Կամսարականը ողջոյնի ճառ արտասանեց, իսկ յետոյ տեղի ունեցաւ կարգադիր կոմիտէի նախագահ կոմիսար Ալ. Քալանթարի զեկուցումը։ Դրանից յետոյ զանազան հիմնարկութիւնների կողմից ուղերձներ կարդացվեցին և ապա անասնաբուծական բաժնի դիտելը տեղի ունեցաւ։ Ժամը 3-ին երկրագործական մեքենաների և տնայնագործական ու արհեստագիտական իրերը դիտեցին։ Ապա ժամը 5-ին կայացաւ թէյի հիւրասիրութիւն, իսկ ժամը 9-ին տեղի ունեցաւ գիւղատնտեսների և բժիշկների ու բնագէտների XIII համագումարի անդամների խորհրդակցութիւն՝ գիւղատնտեսական հարցերի մասին։

Ժամը 11-ին քաղ. ակումբում (քաղ. ակումբի հրաւէրով) տեղի ունեցաւ երեկոյթ։

Հիւրերին ընդունելու, ինչպէս և անասնաբուծական և միւս բաժինների և ուրիշ տեղերի ցուցմունքներն ու բացատրութիւնները տալու համար նշանակված են ուսանողների 6 խմբեր, որոնք կատարում են իրանց պաշտօնը փոփոխակի։

Այսօր, ամսիս 28-ի առաւօտեան ժամը 8-ին, կատարվեցին զանազան սիստեմի գութանների փորձեր՝ Ջիթողցեանների կալուածքի մօտ եղած քաղաքային դաշտում։

Ցուցահանդէսի փակման օրը ցուցադրված իրերի աճուրդ է նշանակված՝ առանձին յայտարարութեամբ։

Աճուրդի ենթարկվելու են այն անասունները, որոնց տէրերը կը ցանկանան ծախել։ Աճուրդը նշանակվելու է այն գնից, որ նախօրօք ծանուցված կը լինի կամ աճուրդի սկզբին։ Ծախված իրերից յօգուտ Ընկերութեան կը ստացվի 1%-ը։ Այս տոկոսը գնողը կը վճարի, երբ ապրանքը ծախվի և փողը ստացվի տիրոջից։

Ցուցահանդէսի կարգադիր կոմիտէի կազմը հետևեալն է.

Կարգադրիչ կոմիտէի նախագահը, նաև ինքն և ցուցահանդէսի կոմիսարը Ալ. Քալանթարն է, իսկ կոմիտէի անդամները՝ Կ. Կամսարական, Ա. Թամամշեան, Խ. Դիլանեան, Ա. Իսահակեան, Ա. Ամիրով, Ա. Բէսէդնով, Ց. Տիգրանեան, Ա. Բաբայեան, Ա. Աթանասեան, Ց. Միրզոյեան, Բ. Շումեան, Գ. Շադինով, Ա. Շաթիրեան, Գ. Տաթևեան, Ն. Սիմէօնեան, Ա. Մարգարով, Թ. Տրոֆիմով, Ն. Տարատինով, Ա. Ջախմախսազեան, Ա. Փիրումով, Բ. Օհանջանեան, Տ. Քալանթար։

Էկսպերտների յանձնախմբի կազմը հետևեալն է.

ա) Եղջերաւոր անասունների բաժին—Ա. Քալանթար, Վ. Լէմուս, Ա. Թամամշեան, Գ. Շադինով, Բ. Շումեան, Զ. Լիվշից, Ա. Բէսէդնով, Ն. Տատարինով, Տ. Քալանթար, Վ. Վէլէժեվ, Բ. Օհանջանեան, Խ. Դիլանեան։

բ) Ձիաբուծական բաժին Վ. Լէմուս, փոխ-գնդապետ Տուսկով, Ա. Մարգարով, Բ. Օհանջանեան, Գ. Տրիլինիսկի, Ս. Աբոյեվ։

գ) Ոչխարների, այծերի և խոզերի բաժնի—Ա. Քալանթար, Գ. Տրիանդաֆիլով, Ս. Ասրիևով։

դ) Թռչնաբուծական բաժնի—Ա. Դորօգլով, Կ. Հէյջուբեան, Պ. Իսաքով, Թ. Տրոֆիմով, Մ. Նաւասարդեան, Տ. Քալանթար։

ե) Մեղուաբուծական բաժնի—Վ. Գինջեան, Գ. Վէհապետեան, Ա. Մխիթարեան, Ս. Կրակովսկի, Տասուճեր, Մ. Խաչատրեան։

զ) Երկրագործական և բանջարաբուծական բաժնի—Ա. Աթանասեան, Ց. Միրզոյեան, Կ. Ֆէդօտով, Բ. Իվանով, Ն. Սիմէօնեան, Զ. Խաչատրեան, Ա. Քարաուշեան։

է) Արհեստագիտական իրերի բաժնի—Ց. Տիգրանեան, Ա. Ջախմախսազեան, Ա. Ամիրով, Ա. Բաբայեան, Կ. Ֆէդօտով, Բ. Իվանով, Գ. Տաթևեան։

Ահաւասիկ այն զեկուցումները, որոնք ներկայացվեցին կամ կարդացվեցին ցուցահանդէսի համապատասխան բաժիններում.

ա) Ընդհանուր տնտեսական և գիւղատնտեսական հարցեր

Ալ. Քալանթար.—«Գիւղատնտեսական փորձեր՝ Ալէքսանդրապոլի գաւառում»։

Կ. Պ. Կամսարական.—«Ալէքսանդրապոլում փորձադաշտեր ու ցուցադաշտեր հիմնելու կարևորութիւնը»։

Խ. Մ. Դիլանեան.—«Ալէքսանդրապոլի գաւառի գիւղատնտեսական կարիքների մասին»։

Զ. Մ. Լիվշից.—«Կենդանաբուծական հերթական հարցերի մասին»։

Ա. Ա. Շաթիրեան.—«Ալէքսանդրապոլի Գիւղատն. և Տնայն. Ընկ. գործունէութեան մասին»։

Մ. Ա. Վասիլիև.—«Ցուրտը և նրա ազդեցութիւնը անասնաբուծութեան վրա»։

Ց. Գ. Միրզոյեան.—«Ս. Փրկչի դպրոցում տեղի ունեցած գիւղատնտեսական դասընթացքների մասին»։ «Ալէքսանդրապոլի գաւառում գիւղատնտեսական գիտութիւնները տարածելու մասին»։

Պ. Ի. Բէքուրեան.—«Ալէքսանդրապոլի շրջանի տնտեսական դրութեան մասին»։

բ) Եղջերաւոր մեծ և փոքր անասունների և կաթնատնտեսութեան մասին

Ալ. Քալանթար.—«Կովկասեան կովերի սերմ (անծին) միալը»։ «Կովկասեան խաշնարածութեան բնոյթը»։

Տ. Հ. Քալանթար.—«Կարսի շրջանի և Սողանլուխի վիճակի կենդանաբուծական տեսութիւն»։

Գ. Ա. Տրիանդաֆիլով.—«Անգորեան այծերի պահանջը»։

Լ. Ս. Մալխասեան.—«Ջանախ պանրի քիմիական բաղադրութիւնները»։

գ) Ձիաբուծական

Ա. Ի. Մարգարով.—«Դուխոբորների շրջանի ձիաբուծութիւնը»։

դ) Թռչնաբուծական

Ալ. Քալանթար.—«Կովկասեան թռչնաբուծութեան ներկայ դրութիւնը»։

Ց. Ա. Դորօգլով.—«Կովկասում ընտանի թռչունների մի քանի տեսակների զարգացնելու մասին դիտողութիւններ»։

Թ. Ա. Տրոֆիմով.—«Ալէքսանդրապոլի գաւառի թռչնաբուծութեան մասին»։

ե) Մեղուաբուծական

Ա. Տ. Տիգրանեան.—«Ալէքսանդրապոլի գաւառում եղած մեղուաբուծութիւնը»։

զ) Երկրագործական

Ա. Աթանասեան.—«Լեռնային շրջանների հողագործական հերթական հարցերը»։

Կ. Պ. Ֆէդօտով.—«Հողի կանոնաւոր հերկի նշանակութիւնը»։ «Երևանի նահանգի երկրագործական գործիքները»։

Վ. Գինջեան.—Ալէք. գաւ. կարտոֆէլի մշակութեան նշանակութիւնը»։

Սալբեկեան.—«Տկլոր գարու ցանքի փորձերը»։

Զ. Խաչատրեան.—«Ալէք. գաւառում բանջարների և հատապտուղների մշակութիւնը»։

է) Ոռոգումն

Ա. Պ. Ջախմախսազեան.—«Ալէք. քաղաքի և գաւառի գիւղական հողերի ոռոգումն»։

Ց. Տէր-Մկրտչեան.—«Փոքր-Ղարաքիլիսայի հողերի ոռոգելու կարևորութիւնը»։

ը) Խոտացանութիւն

Ի. Տ. Փիրումով.—«Ալէքսանդրապոլի ցուցադաշտը»։

թ) Բոյսերի հիւանդութիւնները

Գ. Պ. Գրձելեան.—«Ալէքսանդրապոլի շրջանում բոյսերի վրա տարածված հիւանդութիւնները»։

ժ) Կօօպերացիայի հարցերի մասին

Ա. Քալանթար.—«Կօօպերացիան անասնաբուծական և կաթնատնտեսական գործերում»։

Ա. Աթանասեան.—«Գիւղատնտեսական շրջանում կօօպերացիայի դերը»։

Գ. Ա. Տաթևեան.—«Ալէք. գաւառում հիմնված մանր վարկերի մասին»։

ժա) Տնայնագործական և արհեստագիտական գործեր

Ա. Քալանթար.—«Ալէքսանդրապոլի գաւառի քաղաքացի և գիւղացի ազգաբնակութեան համար արհեստների նշանակութիւնը»։

ժբ) Շրջանային ցուցահանդէսներ կազմակերպելու մասին

Ա. Քալանթար.—«Փոքր շրջանների ցուցահանդէսների նշանակութիւնը և նրանց կազմելը»։ «Ալէքսանդրապոլի ցուցահանդէսի արդիւնքը»։ «Ալէքսանդրապոլի գաւառի ազգաբնակութեան և կենդանաբուծութեան մասին փաստեր»։

ժգ.) Գիւղացիների տուած ցուցմունքները՝ անասնաբուծական հարցերի մասին

Ստացվող նոր զեկուցումների մասին կը լինի լրացուցիչ յայտարարութիւն։

—

Ալէքսանդրապոլ, 29 յունիսի

Ամսիս 28-ին կատարվեցին անասնաբուծական, թռչնաբուծական մասերի և կաթնատնտեսական գործիքների քննութիւններ (էքսպերտիզա)։ Եզան նոր զանազան սիստեմների և տեղական գութանների փորձեր, գլխաւոր ղեկավարութեամբ Ա. Աթանասեանի։ «Աքսայ» ընկ. գութանները չը հասան փորձերին։

Անասնաբուծական բաժնում այցելողներից ստացվեց մօտ 60 ր. (տոմսակ ծախելուց)։

Տնայնագործական և արհեստագիտական բաժինը գրաւեց այդ օրը դէպի իրան մեծ բազմութիւն. 90 ռուբլու տոմսակ ծախվեց այդ օրը։

Քաղաքի ինքնավարութեան իրաւասուները «Ջերքէզի ձորի» այգում ի պատիւ սենատոր Վասացկի և եկող հրաւիրված հիւրերի՝ ժամը 5-ին ճաշ տուեցին. սեղանի նստած էին 100 հոգի. եղան աւելի պատշաճի բանախօսութիւններ, ուղերձներ. ճաշը ստացաւ ընտանի բնոյթ, տեղի ունեցան և թեթև երգեր. իսկ Սևերեան դրագունների գնդի նուագածուները, շարունակ նուագելուց յետոյ, պատւեցին հիւրերին՝ սեղանի շուրջը 3 անգամ նուագելով պատւելով։ Ճաշից առաջ բոլոր հիւրերի խմբական նկարը վերցրեց տեղին Մուշեղեանը։ Ժամը 10-ին սենատորը հրաժեշտ տուեց, որից յետոյ բոլոր հիւրերը յայտնելով իրանց ջերմ յարգանքը քաղաքագլխին և իրաւասուներին՝ ցրվեցին մեծ գոհունակութեամբ։

Կոմս Վօրոնցով-Դաշկովի կենաց բաժակը առաջարկվեց. քաղաքի կողմից հեռագրով յայտնվեց ցուցահանդէսի աջող ելքի և նրա աջակցութեան մասին շնորհակալութիւն։

Ժամը 10-ից Առևտր. դպրոցի տան մէջ կայացաւ ժողով, կարդացվեցին այդ օրվայ նշանակված զեկուցումները. 150-ից աւելի ունկնդիրներ կային։ Նիստը փակվեց գիշերվայ ժամը 12-ին։

Անասնաբուծական բաժինը փակվելու է այսօր (29-ին), իսկ տնայնագործականը՝ վաղը. այսօր այս բաժնում լինելու է էքսպերտիզ և կարդացվելու են մնացած զեկուցումները։

Ն. Ս.

ՆԱՄԱԿՆԵՐ ՆԱԽԱՇԽԱՐՀԻՑ

IV

Գրական-Գեղարուեստական Ընկ. կարիքը

Բագու, 25 յունիսի

«Բագուն հայ ինտելիգենտի համար գերեզման է»։

Այս ֆրազն ես լսել եմ սրանից դեռ մի քանի տարիներ առաջ մեր գրողներից մէկի բերանից, որը վաղուց հեռացել է Բագուից չը կամենալով թաղվել այդ գերեզմանի մէջ։

Այդ օրից անցել է 5 թէ 6 տարի և դժբաղդաբար մինչև այժմ դրութիւնը չէ փոխվել ու մնում է նոյնը։

Հայ ինտելիգենտ անձնաւորութիւնը, որ բաղդի այս կամ այն քմահաճոյքների շնորհիւ ընկնում է Բագու՝ որևէ տեղ, որևէ շրջան չունի, որտեղ կարողանայ իր ազատ ժամանակը օգտաւէտ և կարևոր գործով անցկացնել, ուստի մի քանի տարվայ ընթացքում նա փոխվում է, ենթարկվում շրջապատի ազդեցութեան և դառնում մէկը այն նախրաւոր անձնաւորութիւններից, որոնք միայն անունով են «ինտելիգենտ», իսկ գործով չեն տարբերվում հարիւրաւոր իրանց նման «ինտելիգենտ» անուն չը կրողներից։

Ամբողջ Բագւում չը կայ մի տեղ, չը կայ մի հիմնարկութիւն, ուր մարդիկ կարողանային հաւաքվել մի տեղ, մտքերի փոխանակութիւն ունենալ, խօսել հասարակական հարցերի մասին, զբաղվել գրական այս ու այն հոսանքի քննութեամբ, քննել հայ կեանքը, հայ իրականութեան արտայայտութիւնները։

Եւ միմեանցից կտրված լինելով, պատահմամբ միայն տեսնելով միմեանց փողոցում, զբօսավայրերում, կամ թէ այս ու այն ընկերութիւնների ժողովներում, Բագւի հայ ինտելիգենցիան միշտ էլ հեռու է լինում միմեանցից, միշտ էլ օտար միմեանց։

Ահա այդ բացը լրացնելու համար էր, որ դեռ անցեալ տարվայ վերջերին մի շարք մարդկանց մէջ միտք էր յղացել հիմնել տեղս հայ գրական-գեղարուեստական մի ընկերութիւն, նման Թիֆլիսի Տ. Նազարեանի Սալօնին, կամ տեղական «Գրական-Գեղարուեստական Ակումբին»։

Այդ մի գեղեցիկ և համակրելի միտք էր, որը հրճուանքով ընդունվեց տեղական ինտելիգենցիայի մեծամասնութեան կողմից, նոյնիսկ կազմվեց կանոնադրութիւնը, քննվեց, փոփոխութիւնների ենթարկվեց և յանձնարարվեց մի ընտրված կոմիսիայի ներկայացնել նրան կառավարութեան հաստատութեանը։

Եւ սակայն մինչև այսօր էլ այդ կանոնադրութեան վիճակի մասին ոչինչ յայտնի չէ։

Սակայն այդպիսի մի հիմնարկութեան կարիքը չափազանց մեծ է Բագւի հայ ինտելիգենցիայի, հայ հասարակական գործունէութեամբ հետաքրքրվողների համար։

Ընկերութիւնը կարող է ունենալ ժողովներ այս կամ այն հասարակական հարցերի, գրական հոսանքների մասին մտքերի փոխանակութիւն ունենալու, կարող է դասախօսութիւններ կազմակերպել, գրական երեկոյթներ սարքել, և՝ որ՛ ամենագլխաւորն է՝ հնարաւորութիւն կը ստեղծվի մարդկանց համար մի տեղ հաւաքվելու, շփվելու միմեանց հետ, հետաքրքրվելու մեր կեանքի երևոյթներով և ոչ թէ ամբողջ օրերով աննպատակ թրև գալու փողոցներում և զբօսատեղերում։

Եւ հէնց ինքը Բագւի ինտելիգենցիան, որ կտրված է այդ հնարաւորութիւնից, պէտք է ամեն ճիգ ու ջանք գործ դնէ իրագործելու այդ նպատակը, այլ ոչ թէ ձեռքերը ծալած նստէ և սպասէ երկնքից մանանայի։

Ո՞ւր է մեր ինտելիգենցիան, ինչ է անում նա. մի՞թէ կամենում է արդարացնել այն ընդհանուր կարծիքը, թէ Բագւում հայ ինտելիգենցիա չը կայ, այլ կան միայն կարիէրիստներ, որոնք ինտելիգենտներ, իդէալիստներ են միայն մինչև այն ժամանակ, երբ գրպանները լցվում են ոսկով, կամ չաղ ռոճիկներով պաշտօններ ստանում։

Վաղարշակ Թումանեան

ՈՒՐԱԽԱԼԻ ԵՐԵՒՈՅԹ

—

Գորիս, 22 յունիսի

Ծխական դպրոցների անապահով դրութիւնը և սեփական շէնք ունենալու կարիքը ինչպէս զգալի է գիւղական հասարակութեան համար, նոյնքան և մեծ է այդ անհրաժեշտութիւնը գաւառական քաղաքների նկատմամբ, ուր խմբվում են գիւղերից վերաբնակիչներ գլխաւորապէս երեխաներ կրթութեան տալու նպատակով։ Զանգեզուրի միակ Գորիս քաղաքը ամբողջ 7 տարի չէր կարողանում իր ծխական դպրոցը պարաքից ազատել, իսկ շինութիւնից-շինութիւն շուտ-շուտ տեղափոխութիւնը թէ ինչ այլանդակ դրութիւն էր ստեղծում հոգաբարձութեան և հասարակութեան համար, այդ պարզ է։ Այդ իսկ նպատակով, գնել-դուռ շինելու համար, 1910 թ. Միրզա Ծատուրեանի (այժմ հանգուցեալ) բարեհաճ 3000 ր. նուիրաբերութեան առիթով Երևանի փոխ-թեմակալ Խորէն եպիսկոպոսի ներկայութեամբ և հանդիսաւորութեամբ հիմք դրվեց Գորիսում կենտրոնական դպրոցի շինութեան։ Անցաւ մի երկու տարի, սակայն և համարեա թէ յոյսը կտրեց շինարար մասնախումբը, խոստացված 3000 ր. ամբողջութեամբ չը ստացվեց Ծատուրեանի որդիներից, որոնք այժմ էլ պատրաստ են շինութիւնը շարունակվելու դէպքում խոշոր ծառայութիւն մատուցանել, և գործը թերի մնացած իր տխուր տեսքով մի նախատինք էր հասարակութեան առաջ։ Անցեալ ձմեռ քաղաքիս սիրող երիտասարդների նախաձեռնութեամբ բեմի 25-ամեայ յոբելեանի առիթով ծխ. դպրոցի օգտին տրված երեկոյթը ծածկեց 800 ր. այն պարտքը, որ ունէր դպրոցը, և ներկայումս շնորհիւ հոգաբարձութեան ջանքերի մինչև իսկ ապահով է դպրոցի նիւթականը և ծաւալը մեծացված։

Սակայն ամենաուրախալի երևոյթը մեր հայրենակից Մեսրոպ եպիսկոպոս Տէր-Մովսիսեանի այն հեռագիրն է, որով ամսիս 20-ին յայտնում է Թիֆլիսից, որ յօգուտ ծխական դպրոցի շինութեան՝ առայժմ մեզ համար անյայտ մի բարերարից ստացել է 15,000 ր.։ Այս նուիրաբերութիւնը մի այնպիսի տեղին, գաւառիս յետամնացութեան նկատմամբ ուրախալի գործ է, որ պատիւ է բերում թէ բարերարին, թէ հայրենակից սրբազանին և թէ այն անձնաւորութեանց, որոնք առաջ են մղել գաւառումս այդ դպրոցի գոյութեան անհրաժեշտութիւնը։ Ինչպէս Մեսրոպ սրբազանին, առաւել ևս բարերարին խորին շնորհակալութիւն յայտնեցին հեռագրով հոգաբարձութիւնը, երիտասարդութիւնը և վաճառականութեան ներկայացուցիչները։

Մենք լիայոյս ենք, որ Մեսրոպ սրբազանը դպրոցի շինութեան աւարտմանը չի խնայի իր աշխատանքը և իբրև հայրենիքի հարազատ և սիրող զաւակ՝ իր սկսած գործով եռանդ կը ներշնչէ և ուրիշներին իրանց պարտքը կատարելու այդ ազգօգուտ ձեռնարկութեան համար։

Այսօր Գորիսի հասարակութիւնը՝ մեծից մինչև փոքր, դպրոցական աշակերտները իրար աչքալուսանք են տալիս այդ նուիրաբերութեան համար, որի ապաւորութիւնը այնքան մեծ և համահաւասար է ամենքիս համար։

Գեղեցիկ գործը միշտ էլ ուրախալի և յաւերժ յիշատակ է մնում։

Սաղանդարեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

◆ Փոխարքայի օգնական սենատոր Վասացկին, սրտանց գոհ մնալով Ալէքսանդրապոլի ցուցահանդէսից, այնտեղից մեկնեց Անի, ուր մնաց երկու օր։ Անիում սենատոր Վասացկին ծանօթացաւ պրօֆ. Ն. Մառի կատարած պեղումների հետ և հանգամանօրէն դիտեց Անիի աւերակները։ Վեր-

---

միջավէս յետոյ, որով իրաւունք էր տրվում մեծ պետութիւններին պահանջելու, որպէս զի քրիստոնեայ նահանգապետներ նշանակվեն Թիւրքիայի այն վիլայէթների վրա, ուր ազգաբնակութիւնը կիսով չափ բաղկացած էր քրիստոնեաներից, նորից սկսվեցին հայկական ջարդերը։ Այդ մասին խօսում է արդէն անգլիական դեսպան կապիտան Կլէյտօնը 1879 թւի օգոստոսի 2-ին ուղարկած իր զեկուցագրի մէջ։ Ջարդերը կրկնվում են կրկին ու կրկին, չը նայելով ամենաբեք նրանց առաջ բերած բողոքներին, հասկանալի է, Թիւրքաց կայսրութեան սահմաններից դուրս։ Նրանք մանաւանդ խոշոր չափեր են ստանում 1894 թւի սեպտեմբերից մինչև 1896 թւի աշնան ժամանակամիջոցները, մինչև հայկական ջարդերը Կ. Պոլսում, Ակնում, Եվերեկում։ Նրանք յաջորդում են աւելի փոքր չափերով 1901 թւին, նրանց մասին խօսք է լինում Գուռնան գիւղում 1904 թւի փետրվարի 5-ին։ Ադանայի աղէտը 1909 թւին հնարաւորութիւն է տալիս նախատեսելու, թէ ինչպէս կը լինեն այն սարսափելի կոտորածները, որ նորից պատրաստում են քիւրդերը իրանց հարևանների համար և որոնց մասին արդէն սկսել է խօսել ինչպէս արտասահմանեան, այնպէս և ռուսական մամուլը։ Այս անգամ միայն մի տեղում, 25—30 հազար քրիստոնեայ ու մահմեդական ազգաբնակութեամբ, կառավարութեան իսկ խոստովանութեամբ, կոտորել էին վեց հազար հոգի, իսկ տեղական նօտարների դրւսոր զեկուցմանը համաձայն ամբողջ 15 հազար։ Խողխողում էին բոլորին, անխտիր՝ կանանց ու երեխաներին, [illegible] ու հիւանդներին, բռնաբարում էին կանանց ու անչափահասներին, հրդեհում էին հիւանդանոցները նրանցում պառկած հիւանդներով միասին, և ընդհանուր առմամբ ստացուածքային վնաս տուին 3 միլիօն թիւրքական ֆունտ*)։

«Ես չեմ վերադառնայ այն հարցին, թէ որ չափով այդ բոլոր ջարդերը առաջացել էին կառավարութեան գիտակցական գործունէութիւնից։

«Ֆրանսիայի նախկին արտաքին գործերի մինիստր Գաբրիէլ Հանօտօն բացարձակ կերպով մեղադրում էր 1896 թւի ջարդերում սուլթան Աբդիւլ-Համիդին, յենվելով Պոլսի դիպլօմատիկական գործակալի տուած անմիջական զեկուցումների վրա*)։ Բայց «արիւնոտ սուլթանը» վաղուց է, որ այլևս չէ թագաւորում. այնուամենայնիվ ջարդերը շարունակվում են դեռ։ Բաւական է կարդալ այն յօդուածները, որոնք վերջին օրերս լոյս տեսան մեր մամուլի էջերում, բաւական է յիշել այն առաջադրութիւնները, որ արել է Թիւրքաց կառավարութեանը հայոց կաթողիկոսը, ֆրանսիական կառավարութեան պահանջները Բ. Դրան, այն ագիտացիան, որ յարուցված է յօգուտ հայերի Գերմանիայում, ստացված վերջին տեղեկութիւնները՝ թէ հայերը զինաթափ են արված, իսկ քիւրդերը յարձակման անհրաժեշտ պարագաներով օժտված, նախատեսելու վրէժխնդրութեան հնարաւորութիւնը այն մարդկանց կողմից, որոնք զգոված են նենգամտօրէն տարածված այնպիսի լուրերով, թէ Թիւրքիայի հասցրած պարտութիւնների պատասխանատւութիւնը ընկնում է քրիստոնեայ ազգաբնակութեան վրա, որ առաջին դաւաճանները հայերն են։

«Եւ ահա բոլոր իրաւունքներից ամենատարրականի՝ ապրելու իրաւունքը կոպտաբար խախտելու նոր երկիւղների նախօրեակին անցնում է իմ մտքով, թէ որքան քիչ բան է դեռ արված մեզանում, Ռուսաստանում, հասարակական կարծիքը այդ տեսակ մոլեգնութիւնների դէմ կազմակերպելու մտքով։ Ինչպիսի թոյլ հետևանքներով պըսակվեց իմ անմոռանալի բարեկամ Ջանշեանի սկսած պրօպագանդան, որի համար հաւատարապէս թանգ էին թէ մեր ազատագրական շարժման շահերը, և թէ գոյութեան իրաւունքը, գոնէ, իր սեփական ցեղակիցների։

«Աւելի աջող էր յետագայում այն երևելի պետական գործչի եղբօրորդու գործունէութիւնը, որ Ալէքսանդր II-ի թագաւորութեան վերջին տարիները կոչված էր դուրս հանելու Ռուսաստանը այն ծանր վիճակից, որին հասցրել էին այն իրագործելի յոյսերն ու հակասութիւնները, որ գոյութիւն ունէին ազատութեան պահանջները ներսում ճնշելու և Բալկաններում նրանց խրախուսելու քաղաքականութեան մէջ»։

Ապա Մ. Կովալէվսկին իր կողմից մի քանի ծանօթութիւններ տալով Լօրիս-Մելիքեանի մասին՝ առաջ է բերում ֆրանսիական գործիչների վերոյիշեալ նամակները և իր կողմից աւելացնում է հետևեալը.

«Ի՞նչ աւելացնել այդ բոլոր արդարացի խօսքերին։ Թերևս միայն այն, որ Լօրիս-Մելիքեանի անցեալ գործունէութեան իբրև վկայ, ես խորապէս համոզված եմ, թէ չը կայ Եւրոպայում մի մարդ, որից այնքան վստահօրէն լսէին թէ կառավարչական, թէ գրական և թէ հասարակական շրջանները յայտարարութիւններ իր ցեղակիցների կրած աղէտների մասին, նրանց սպառնացող վըտանգի, նրանց ակներև ու գաղանի թշնամիների մասին, որքան Լօրիս-Մելիքեանից, և որ ոչ ոքի այդ միևնոյն շրջանները նրա չափ նշանակութիւն չէին տալիս այն պատասխանող աղէտների ու ամենամեծ ոճիրների առաջն առնելու համար գործնական միջոցներ մշակելու հարցում, որոնցով գուցէ մռայլված է մեր ժամանակի պատմութիւնը։ Չեմ կասկածում, որ Թիւրքահայերի մէջ կը գտնվեն անձնազոհ հայրենասէրներ, պատրաստ ծառայելու իրանց ժողովրդին։ Սակայն նրանց գործունէութիւնը կրկնակի աջող կը լինէր, եթէ որ նրան կցէին մի մարդու, որը այդչափ վստահութիւն է վայելել գրականութեան, ժուռնալիստիկայի ու քաղաքական աշխարհի լաւագոյն ներկայացուցիչների մէջ։

«Ուստի աւարտում եմ իմ համառոտ դիտողութիւնը հայկական շարժման անցեալի մասին, յոյս յայտնելով որ հնագոյն և իր արիական քաղաքակրթութեամբ մեզ ազգակից բազմաչարչար հայ ցեղի բոլոր բարեկամների միահամուռ ջանքերով վերացվելու է պատրաստվող մասսայական չարագործութիւնը, և որ Եւրոպայի ու Ռուսաստանի առաջ հայ ժողովրդի պաշտպանների ու ներկայացուցիչների շարքերում կանգնելու է մեր թանգագին բարեկամ ու համախոհ Յ. Զ. Լօրիս-Մելիքեանը»։

---

*) Տես այդ ջարդի մասին Ադրիանուպոլսի պատգամաւոր Պապիկեան էֆէնդիի տուած զեկուցումը 1909 թւի յունիսի 7-ին։ Նա տպված է Պարիզում լոյս տեսնող «Pour les Peuples d'Orient» ամսագրի № 11-ում։

*) Տես Պարիզում 1904 թ. լոյս տեսած «Հայաստան և Մակեդոնիա» գրքի XXVI երեսը։

ջում սենատորը երկար խորհրդակցեց պրոֆեսոր Մարրի հետ պեղումների գործի առիթով առհասարակ։ Անիից մեկնելով, սենատոր Վառացին ուղեւորվեց դէպի Երեւան։

◆ Վերադարձան Ալէքսանդրոպոլից Ալէքսանդրօպոլի ցուցահանդէս գնացած՝ կարգադիր յանձնաժողովի նախագահ և կօմիսար Ալ. Քալանթար և գիւղատնտես մասնագէտները։

◆ Համարեա ամէն օր Թիֆլիս են գալիս Ռուսաստանի զանազան տեղերից էկսկուրսանտներ։

◆ Պրոֆ. Լէմուսը մեկնեց Մեծ-Ղարաքիլիսա, ծանօթանալու համար այնտեղի կաթնատնտեսական դասընթացքների հետ։

◆ Դերբենդից եկած Ռ. Տէր-Գրիգորեան տեղեկացնում է մեզ, որ այնտեղ ժողովրդական բանաստեղծ շահիր-Խաչատուրի (Խաչատուր Ս. Շահնազարեան) յօբելեանը կատարած յանձնաժողովը որոշել է հրատարակել շահիրի թէ արդէն տպված և թէ անտիպ գրուածքները։ Խմբագրութեանս մէջ ստացվեց յօբելեարի լուսանկարը։

◆ Երկարատեւ և ծանր հիւանդութիւնից յետոյ Թիֆլիսում վախճանվել է Ադամ Աբիշատեան-Սարդարեանը, որ ունի մի քանի աջող ծիծաղաշարժ վօդեվիլներ ու կօմեդիաներ և որոնք մի ժամանակ ներկայացվում էին պարբերաբար ժողովրդական բեմերի վրա։

◆ Բժիշկների և բնագէտների համագումարին մասնակցած և Թիֆլիսից մեկնած պրոֆեսորներից մինը Կիսլօվօդսկում ենթարկվել է 4 անյայտ չարագործների յարձակման, որոնք մի քանի վէրք են հասցրել նրան։ Ներկայումս պրոֆեսորը պառկած է հիւանդանոցում։ Չարագործները կալանաւորված չեն։

◆ Թիֆլիսում սպասվում է Խարկովի համալսարանի պրոֆեսոր Զօմմէրը պեղումներ կատարելու նպատակով։ Պրոֆեսորին ուղեկցում են համալսարանի երեք ուսանող։

◆ Մեկնեց Երեւանի նահանգը Կովկասի քաղաքացիական վարչութեան բժշկական մասի կառավարիչ Ֆեխնէրը։

◆ Երկրագործութեան գլխաւոր կառավարիչ Կրիվօշէինը Մուղանում կատարած իր ճանապարհորդութեան նկարագրութիւնը ուղարկել է Թիֆլիսի քաղ. ինքնավարութեան, Կայսերական Կովկասեան Գիւղատնտեսական Ընկերութեան և տեղական ռուս օրաթերթերից մի երկուսին։

◆ Մոսկվայում վախճանված իշխանուհի Գրուզինսկայան իր մի տունը կտակել է վրացի աղքատ ուսանողների օգտին։

◆ Մեզ տեղեկացնում են, որ Վօլժսկօ-Կամսկի բանկի Թիֆլիսի բաժանմունքի կառավարիչ Վ. Ս. Բօնդարցեվ նոյն պաշտօնով տեղափոխվում է Եկատերինօսլաւ։ Թիֆլիսի բաժանմունքի կառավարիչ կարգվում է Բօնդարցեվի օգնական Ս. Գ. Մաղմանեանը։

◆ Յուլիսի 1-ին, գեղագործի որդի Ալէքսանդր Բրօունը, 13 տարեկան, որ ապրում է իր ծնողների մօտ, Միքայէլեան փողոցով անցնելիս ինքնասպանութեան նպատակով խմեց փոքր քանակութեամբ սուլէմա և ընկաւ մայթի վրա Միքայէլեան կամուրջի դիմաց։ Նրա կեանքին վտանգ չէ սպառնում։ Ինքնասպանութեան նպատակը առ այժմ յայտնի չէ։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Պարիզում, յայտնի հրատարակչական ֆիրմա Էրնէստ Լըրուի հրատարակութեամբ լոյս են տեսել ֆրանսերէն երկու աշխատութիւններ վերաբերեալ հայկական գրականութեան։ Առաջինը յայտնի հայ գործիչ և գրող Մինաս Չերազի մի նոր աշխատութիւնն է՝ «Poètes Arméniens» («Հայ բանաստեղծներ») վերնագրով, որ պարունակում է Պետրոս Դուրեանի, Գամառ-Քաթիպայի, Սայաթ-Նօվայի, Գէորգ Դոդոխեանցի, Միքայէլ Նալբանդեանի և Խորէն Լուսինեանի յայտնի երկերի թարգմանութիւնը, հեղինակի կողմից զանազան ծանօթութիւններով։

Երկրորդն է նոյն Էրնէստ Լըրուի հրատարակութեամբ և Ֆ. Մաքլէրի խմբագրութեամբ լոյս տեսնող «Փոքրիկ հայկական մատենադարանի» (Petite Bibliothèque Arménienne) մի նոր հատորը, որ պարունակում է թիւրքահայ գրող Ռուբէն Զարդարեանի «Ցայգալոյս» վէպի թարգմանութիւնը, որ կատարել են՝ Արշակ Չօպանեան, Եդուարդ Գօլանճեան և Գր. Եսայեան, և որին կցված է Գաստօն Բօնէ-Մօրիի առաջաբանը։

Երրորդ հրատարակութիւնն է թիւրքահայ գործիչ և գրող դօկտոր Վահրամ Թորգոմեանի աշխատութիւնը «Երեմիա Չելէպիի Քէօմիւրճեան Ստամպօլոյ պատմութիւն» վերնագրով, որ լոյս է տեսել Վիէննայի Մխիթարեան տպարանում, իբրև Ազգային Մատենադարանի ՀԱ. գիրքը։

Այս երեք գրքերի մասին մենք առանձին կը խօսենք։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 1 յուլիսի

«Մեղու Հայաստանի»-ի խմբագիր հանգուցեալ Պետրոս Սիմէօնեանին մահարձան կառուցանելու համար ընտրված յանձնաժողովս հետեւեալ կազմով՝ նախագահ բժշկապետ Նաւասարդեան և անդամներ՝ Եղնիկ ա. ք. Երզնկեանց, Ա. Քիշմիշեան, Մ. Սալամբէգեան, Սամսոն Ջէրքէզեան, բժշկ. Ներսէս Ումիկեան և անդամ-քարտուղար Վ. Առաքելեան, ժողովվելով վերջնական նիստին իր պարապմունքի առարկայ դարձրեց վերոյիշեալ արձանի համար նուիրաբերած և հանգանակած գումարների և եղած ծախսերի հաշիւը։

Յանձնաժողովի անդամ Եղնիկ ա. քահանայի ներկայացրած հաշիւներից երևաց հետևեալը.

ա) Մուտք.— Մինչև նահանգապետից ժողովարարութեան համար պաշտօնապէս թոյլտուութիւն ստանալը. 1) Հանգուցեալի թաղման ժամանակ, փոխանակ ծաղկեպսակի, զանազան անձերից (9 հոգի) իբրև նուէրներ ստացված է 209 ր., 2) Սանասարեան վարժարանի Կ. Պօլսի խնամակալութիւնից թաղման համար ստացված է 400 ր., 3) Այս գումարների տոկոս բանկային ընթացիկ հաշւով 15 ր., 4) Պետրոս Սիմէօնեանի մօտը եղած գումարը 176 ր., 5) Նահանգապետից թոյլտուութիւն ստանալուց յետոյ զանազան տեղերից և անձերից հանգանակված է 680 ր. 60 կ.։ Ընդամենը՝ 1480 ր. 60 կ.։

բ.) Ծախք.—1) Հանգուցեալի թաղման համար եղած ծախսը, ինչպէս նաև առաջին տարելիցի, երկրորդ տարելիցի (արձանի հանդիսաւոր բացմանը) ընդամենը 336 ր. 30 կ., 2) Տուած է համաձայն հանգուցեալի յանձնարարութեան՝ ա) Մի այրի կնոջ իբրև նպաստ 50 ր., բ) Հանգուցեալի ծառային ընծայ և այլն 14 ր., 3) Մարմարիօնի արձանի պայմանաւորված արժէքը 1056 ր., 4) Վանդակապատի ծախք 165 ր.։ Ընդամենը՝ 1621 ր. 30 կ.։

Հանելով մուտքը ծախքից մնում է բաց 141 ր. 70 կ., որպիսի գումարը քանդակագործ Անդրէօլէտտին վերջնական հաշւի ժամանակ, ի նկատի առնելով գործի հասարակական նշանակութիւնը, ինքնայօժար կամքով զիջեց։

Յանձնաժողովը միաձայն ճիշդ գտնելով վերոյիշեալ ել և մտից հաշիւը, միաձայն որոշեց նախ՝ փակել այս հաշիւները, երկրորդ՝ իրան գործի աւարտելուց յետոյ լուծված համարել, երրորդ՝ այս հաշիւները տպել մամուլում ի գիտութիւն հասարակութեան և չորրորդ՝ յանձնաժողովի կողմից յայտնել շնորհակալութիւն, ինչպէս քանդակագործ Անդրէօլէտտիին 141 ր. 70 կոպ. նուիրելու համար, նմանապէս և բոլոր այն անձանց, որոնք իրանց նուէրներով օգնեցին և նպաստեցին հանգուցեալ Պետրոս Սիմէօնեանին մահարձան կանգնեցնելուն, որին նա կատարելապէս արժանի էր, իբրև ազնիւ ազգային գործիչ։

Նախագահ՝ բժ. Բ. Նաւասարդեան
Անդամներ՝ Ա. Քիշմիշեան, Ե. ա. ք. Երզնկեան, բժշկ. Ն. Ումիկեան, Մ. Սալամբէգեան, Ս. Ջէրքէզեան.
Անդամ-քարտուղար՝
Բ. Առաքելեան

Թաւրիզ, 24 յունիսի

Խորին շնորհակալութիւն եմ յայտնում Սօվուջ-Բուլաղի դատաւոր սարդար Մամադ Հուսէյն-խանին, Սէֆիդին-խանի որդուն, որ նուիրեց 1000 ղրան, նոյնպէս և վաճառականապետ հաջի Նաղի Քեաղում-օղլիին, որ նուիրեց 250 ղրան յօգուտ Սուլդուզի Նաղադէյ գիւղում ապագայում բացվելիք եկ.-ծխ. դպրոցի։ Յիշեալ գումարները յանձնեցի Ատրպատականի թեմ. առաջնորդ Ներսէս վ. Մելիք-Թանգեանին ի տնօրինութիւն։

Այցելու հովիւ Ատրպատականի՝
Ղեւոնդ ար. Գասպարեան

ՅՕԳՈՒՏ ՍՈՒՐԱՄԻ ԾԽԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ

Սուրամի եկ.-ծխ. դպրոցի 50-ամեայ յօբելեանի առիթով Մոսկվայից նուիրել են. Եղբ. Տարասեաններ 200 ր.։ Մ. Գ. Բուդաղեան, եղբ. Ժամհարեաններ և Յ. Ա. Մանթաշեան 100-ական ր.։ Մ. Ծորչորեան, եղբ. Թումանեաններ, Բ. Արղութեան, եղբ. Խարմախչեաններ, Ա. Մասլով, Ս. Մ. Պապովեան, Դ. Մ. Առաֆէլեան, տիկ. Եղ. Միրզոյեան, Յ. Էքիզլէր և Մոսկվայի հայոց եկ. խորհուրդը 50-ական ր.։ Եղբ. Բունիաթեաններ և եղբ. Տէր-Մկրտչեաններ 30-ական ր.։ Առևտ. տուն եղբ. Գէորգեաններ, Հ. Աֆրիկեան, Յ. Ամիրեան, Ս. Դուլղարեան, Ռ. Գէորգեան, եղբ. Բաղդասարեաններ և Կ. Կարօտեան 25-ական ր.։ Մ. Մելիք-Մարութեան 20 ր.։ Ռ. Բ. Սարգսեան և Ն. Ս. Շահ-Պարոնեան 15-ական ր.։ Ի. Աւանէսեան, առևտ. տուն Հախնազարեան, Ե. Ս. Տէր-Յարութիւնեան և Մ. Տէր-Գրիգորեան 10-ական ր.։

Զայն

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ «Рѣчь»-ին հեռագրում են Սօֆիայից, որ այնտեղ երկիւղ են կրում Բօլգարիայի ներքին անկարգութիւններից։ Մի շարք լրագիրներ փակված են։ Դադարեցված է մինչև անգամ պաշտօնական օրաթերթերի հրատարակութիւնը։

◆ Միևնոյն լրագրին հեռագրում են Բերլինից, որ Բուխարէստում միտք է յղացել վեհաժողով կայացնելու բալկանեան գործերի առիթով Ռումինիայի մայրաքաղաքում, ըստ որում վեհաժողովի նախագահ լինելու է Ռումինիայի ներկայացուցիչը։

◆ «Р. М.»-ին հեռագրում են Հռօմից. «Տեղիս քաղաքական շրջաններում խօսում են Աւստրիայի ռազմի մտադրութիւնների մասին։ Գլխաւոր շտաբի պետ գեներալ Գեծցենդորֆը պահանջում է գրաւել Նովօ-Բազարի սանջակը։

◆ Յունաց նաւատորմը գրաւեց Կավալան։

◆ Վերջին տեղեկութիւնների համաձայն, Ռումինիան ռազմագիտական նկատումներով որոշել է պատերազմական գործողութիւնները սկսել Դօբրուջի մօտ, եթէ մեծ պետութիւններն անկարող լինեն զինադադար կայացնել տալ։

◆ Վիէննայում հեռագիր է ստացվել, որ Ռուսաստանը համաձայնել է հրաժարվել միպլուխ միջնորդ դատարանից և միջնորդ դատարանի գործը թողնել մեծ պետութիւններին։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌ. ԳՈՐԾ.)

30 յուլիսի

ՄԻՆՍԿ։ Ժողովրդական արբեցողութեան դէմ կռւելու նպատակով Միտրոֆան եպիսկոպոսը թեմի անունով տուած գրութեան մէջ առաջարկում է հոգևորականութեանը կազմակերպել ամենուրեք ժուժկալութեան ընկերութիւններ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Խուզարկու ոստիկանութեան պետերի համագումարը ցանկալի գտաւ՝ բանալ քրէական-խուզարկու գործի մասնագիտական դասընթացքներ խուզարկու ոստիկանութեան պետերի և ընդհանուր ոստիկանութեան բարձրաստիճան պաշտօնեաների համար, դասընթացքներ բոլոր նահանգական քաղաքներում և դպրոցներ գաւառական քաղաքների պահակների համար։

Գրաւվեց «Наша Заря»-ի № 4 ու 5։

Նորին Մեծութեան անուան Երևանեան 13-րդ գնդի հրամանատար գնդապետ Մգլիվանին նշանակվեց ֆլիգէլ-ադիւտանտ։

ԲԻԻԿ։ Զինւորական օդագնաց Ցարուէնը երէկ մի մարդու հետ առանց կանգնելու թռաւ 480 կիլոմետր և այդպիսով սահմանեց համաշխարհային մրցակէտ։

ՎԻԼՆԱ։ Լրագրական տեղեկութիւնները այն մասին, թէ աւազակային յարձակում է եղել պետական բանկի վրա և թէ քաղաքում սկսվել է հակահրէական տէրօր, իրականութեանը չեն համապատասխանում։

ԼՕՁ։ Փակվեց Այզէնբրաունի գործարանը, ուր աշխատում էին 1200 բանւոր։

Խմբագիր՝ Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ե. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ОДОЛЬ
Безспорно лучшее полосканiе

Ամենօրեայ սիստեմատիկ գործածութիւնը Օդօլի կազմում է ամենագերագոյն խնամքը ատամների և բերանի խոռոչի վերաբերմամբ։

(M. 179586/179604)

Karbol-Seife
Карболовое мыло
для мытья и купанья
как предохранительное средство противъ заразы холерою, оспою, сифилисомъ, чесоткою и пр., также и для дезинфекціи бѣлья больныхъ
Ферд. Мюльгенсъ
Кусокъ 10 коп.
Кельнъ и Рига.
Осн. 1792 г.

Հիւանդաբեր տարրերի հետ շփվելուց կամ հասարակ կեղտոտվելուց յետոյ հարկաւոր է
ԱԽՏԱՀԱՆԵԼ ՁԵՌՆԵՐԸ
«№ 4711 Կարբոլեան սապոնով»

(M. 239572/239577)

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բժշկ. Բ. Նաւասարդեանի
Հիմնված 1880 թ.
(Պուշկինի, Վօրոնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
«606»-ի եւ «914»-ի ներարկում բժշկական խորհրդակցութեամբ՝ 11—12 ժ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան վեներական (սիֆիլիս) հիւանդութիւն։
Բ. Գ. ԱՂԱՍԲԵԱՆ—1—2 ժ. ներքին և երեխայոց հիւանդութ.։
Ղ. Մ. ԶԻՍՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հիւ.
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութիւն, կանանց և երեխայոց հիւ.։
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւանդութ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական, վիրաբուժութեան և միզասեռ. հիւ.։
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. ներքին և երեխայոյ հիւ. և ծաղկահատ.։
Կ. Գ. ԳՈՒՐԳԵՆԻՁԷ—1—2 ժ. ներքին, երեխայոց հ. և ծաղկահատ։ Երեան, մէզի, խուխի հետազօտութիւն։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ՏԷՐ-ԳԱՒԹԵԱՆ—12—1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—6—7 ժ.։
Կ. Գ. ԳՈՒՐԳԵՆԻՁԷ—6—7 ժ.
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0 70

„ՄՇԱԿԻ" ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ
ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ
ՅՕԳՈՒՏ ՀԱՅ ԱՐԿԱԾԵԱԼՆԵՐԻ
հետեւեալ հրատարակութիւնները.
1) «ԳԵՂՈՒՆԻ» պատկերազարդ հանդէսի 1906 թ. համարը, յօգուտ կովկասահայ արկածեալների . 4 ր.
2) «ԳԵՂՈՒՆԻ» պատկերազարդ հանդէսի 1909 թ. համարը, յօգուտ Ադանայի արհաւիրքներին ենթակայ հայերի . . . . 4 ր.
3) «ՀԱՅԻ ԿՏՈՐ ՋԷՅԹՈՒՆՑՈՒՆ», յօգուտ Զէյթունի հայ սովեալների 2 ր.
«ՏՆԱՅԻՆ ԲԺՇԿԱՐԱՆ», բժշկպ. Գ.
4) Բաբեանի I հատոր, Բնախօսութիւն եւ անդամազննութիւն . 1 ր.
II հատոր, Հիւանդութիւններ (վարակիչ, ներքին, կաշուի), դեղարան, բառարան . . . 1 ր. 60 կ.
5) «ՇԷՔՍՊԻՐ ԵՒ ԻՐ «ՀԱՄԼԷՏ» ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ ԱՂԲԻՒՐՆ ՈՒ ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ», Պ. Ադամեանի 1 ր.
6) «ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԱՊՈՒԿ», Քամալեանց Ս.-ի . 50 կ.
Յիշեալ գրքերը Թիֆլիսում մեզանից գնողները կարող են իրանց խսկական գներով ձեռք բերել։
Թիֆլիսից դուրս պահանջողների հաշւին է ճանապարհածախսը։
1. 10—3

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ
1913 թիւ ապրիլի 18-ից մինչև 1914 թ. ապրիլի 17
(Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամ նակով)
ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է
ԲԱԳՈՒ.—**Արագ գնացքը** № 6—10 ժ. 16 ր. ա հասնում է Աղստաֆա 12 ժ. 34 ր., Գանձակ 3 Եւլախ 4 ժ. 31 ր., Հաջի-Կաբուլ 8 ժ. 6 ր. եր., գու 11 ժ. 13 ր. գիշ.։ **Պոստային գնացքը** № 10 ժ. 16 ր. գիշ., հասնում է Աղստաֆա 1 ժ ր. գիշ., Գանձակ 4 ժ. 16 ր. առ., Եւլախ 6 ր. առ., Հաջի-Կաբուլ 10 ժ. 46 ր. առ., Բագու 31 ր. ցեր.։ **Մարդատար գնացքը** № 8—6 ժ ր. եր., հասնում է Աղստաֆա 8 ժ. 50 ր. եր., ձակ 11 ժ. 23 ր. գիշ., Եւլախ 1 ժ. 1 ր. առ.։ Հաջի-Կաբուլ 4 ժ. 42 ր. առ., Բագու 7 ժ. 53 ր. առ., **Խառն գնացքը** № 106 (Մարդատարի արագութեամբ ապրանքների համար)—4 ժ. 23 ր. առ., հասնում է Աղստաֆա 8 ժ. 41 ր. առ., Գանձակ 1 ժ. 7 ր. ցեր., Եւլախ 5 ժ. 19 ր. ցեր., Հաջի-Կաբուլ 12 ժ. 29 ր. գիշ., Բագու 7 ժ. 28 ր. առ.։
ԲԱԹՈՒՄ.—**Պոստային գնացքը** № 3—9 ժ. 51 ր. առ., հասնում է Միխայլօվօ 1 ժ. 56 ր. ցեր., Բաթում 11 ժ. 8 ր. գիշ.։ **Մարդատար գնացքը** № 7—4 ժամ 40 ր. ցերեկվայ, հասնում է Միխայլօվօ 8 ժ. 46 ր. եր., Բաթում 5 ժ. 40 ր. առ.։ **Մարդատար գնացքը** № 9—10 ժ. 30 ր. գիշ., հասնում է Միխայլօվօ 2 ժ. 31 ր. գիշ., Բաթում 10 ժ. 59 ր. առ.։ **Խառն գնացքը** № 107 (մարդատարի արագութեամբ ապրանքների համար)—2 ժ. 48 ր. գիշ., հասնում է Միխայլօվօ 8 ժ. 20 ր. առաւ., Բաթում 10 ժ. 18 ր. գիշ.։
ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ.—**Պոստային գնացքը** № 4/3—12 ժ. 51 ր. ցեր., հասնում է Ղարաքիլիսա 8 ժ. 10 ր. եր., Ալէքսանդրօպօլ 11 ժ. 48 ր. գիշ., Էջմիածին 5 ժ. 12ր. գիշ., Ուլուխանլու 5 ժ. 40 ր. գիշ. (առանց Երեւան մտնելու), Նախիջևան 10 ժ. 15 ր. առ., Ջուլֆա 11 ժ. 42 ր. ցեր.։ **Մարդ.-ապրանքատար գնացքը** № 24/23 (միայն II և III կարգի վագօններով)—8 ժ. 8 ր. եր., հասնում է Ղարաքիլիսա 3 ժ. 23 ր. գիշ., Ալէքսանդրօպօլ 6 ժ. 57 ր. առ., Էջմիածին 12ժ. 10 ր. ցեր., Ուլուխանլու 12 ժ. 38 ր. ցեր., Երևան 1 ժ. 33 ր. ցեր.։ **Մարդատար-ապրանքատար գնացքը** № 14/13—12 ժ. 46 ր. գիշ., հասնում է Ղարաքիլիսա 8 ժ. 13 ր. առ., Ալէքսանդրօպօլ 11 ժ. 50 ր. ցեր., Կարս 4 ժ. 18 ր. ցեր.։
ԲՈՐԺՕՄ.—**Մարդատար գնացքը** № 17/18—8 ժ. 2 ր. առ., հասնում է Գօրի 10 ժ. 41 ր. առ., Բօրժօմ 9 ժ. 31 ր. ցեր.։ **Մարդատար** № 19/20—3 ժ. 18 ր. ցեր., հասնում է Գօրի 5 ժ. 59 ր. ցեր., Բօրժօմ 1 ժ. 2 ր. երեկ.։
ԹԻՖԼԻՍ Է ՀԱՍՆՈՒՄ
ԲԱԳՈՒԻՑ.—**Արագ գնացքը** № 5—9 ժ. 35 ր. եր. **Պոստային գնացքը** № 3—9 ժ. 1 ր. առ.։ **Մարդատար գնացքը** № 7—3 ժ. 53 ր. ցեր.։ **Խառն գնացքը** № 107—2 ժ. 12 ր. գիշ.։
ԲԱԹՈՒՄԻՑ.—**Պոստային գնացքը** № 4—9 ժ. 16 ր. երեկ.։ **Մարդատար գնացքը** № 8—5 ժ. 54 ր. ցեր.։ **Մարդատար գնացքը** № 10—8 ժ. 40 ր. առ.։ **Խառն գնացքը** № 106—3 ժ. 38 ր. գիշ.։
ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ.—**Պոստային գնացքը** № 4Д./3—7 ժ. 32 ր. եր.։ **Մարդ.-ապրանքատար գնացքը** № 26/25—(II և III կարգի վագօններով)—10 ժ. 50 ր. առ.։ **Մարդ.-ապրանքատար գնացքը** № 16/15—7 ժ. 28 ր. առ.։
ԲՕՐԺՕՄԻՑ.—**Մարդատար գնացքը** № 17/18—1 ժ. 7 ր. եր.։ **Մարդատար գնացքը** № 19/20—7 ժ. 38 ր. առ.։

ԻՒՐԻԷՎԻ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԱՄԱԼՍ. ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ
(Լուսաւորութեան Մինիստրութեան իրաւասութեան ներքոյ գտնվող)
Բացված է խնդիրների ընդունելութիւնը I, II, III, IV և V կուրսերը բժշկական ֆակուլտէտի, I, II, III և IV կուրսերը բնագիտա-պատմական և մաթեմատիկական ֆակուլտէտների և I և II կուրսերը ատամնաբուժական բաժանմունքի համար։ Դասընթացքները ներկայացնում են իրանցից բարձրագոյն դպրոց. ծրագիրը համապատասխանում է համալսարանների ծրագրին և հաստատված է Լուսաւորութեան Մինիստրութեան կողմից։ Ընդունվում են երկու սեռի անձեր։ Ուսման վճարը՝ բժշկական ֆակուլտէտի իւրաքանչիւր սեմէստրը 75 ր., բնագիտա-պատմական և մաթեմատիկական ֆակուլտէտինը 50 ր., իսկ ատամնաբուժական բաժանմունքինը 85 ր.։ Խնդիրները տրվում են դասընթացքների վերատեսչի անունով (Юрьевъ, Лифл. губ., Канцелярія Юрьевскихъ Частныхъ Университетскихъ Курсовъ, уголъ Глиняной и Промышленной улицъ).
Հ. 529. 2—2

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԿՈՎԿԱՍԻ ՓՈԽԱՐՔԱՅԻ
ԴԻՒԱՆԱՏԱՆ ՏՊԱՐԱՆԸ
(ԼՈՐԻՍ-ՄԵԼԻՔՕՎՍԿԱՅԱ ՓՈՂՈՑ, ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ՏՈՒՆ)
կատարում է ամեն տեսակ տպարանական աշխատանքներ, այն է՝ տպագրում է լրագիրներ եւ ամսագիրներ, գրքեր, բրօշիւրներ, բլանկներ, աֆիշաներ, ծրագիրներ, հարսանեկան հրաւիրատոմսեր, այցեքարտեր եւ այլն։
Ընդունվում են տպագրական պատուէրներ հետևեալ լեզուներով՝ ռուսերէն, հայերէն, վրացերէն, թուրքերէն, ֆրանսերէն, գերմաներէն, աբխազերէն և լեռնականների բարբառով
Պատուէրները կատարվում են մաքուր, ճշգրիտ և չափաւոր գներով։ Ընդունվում են նաև շտապ փոյթ կատարվելիք պատուէրներ առանձին պայմաններով։
Պատուիրողների ցանկութեան համաձայն, տպարանը պատուէրները կարող է կազմել տալ, կամ բրօշիւրներ շինել, ու այնուհետ յանձնել։
ԿԱՆ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԶԱՆԱԶԱՆ ՏԵՍԱԿ ԹՂԹԵՐ ՊՐԷՅՍ-ԿՈՒՐԱՆՏԻ ԳՆԵՐՈՎ։
Տելեֆոն № 67.

ԴՕԿՏՕՐ
Ա. ՇԱՀԲԱԶԵԱՆԸ
ԲԵՐԼԻՆՈՒՄ
Շարունակում է ընդունել ամեն տեսակ հիւանդ խորհրդակցութիւններ է կազմում պրոֆեսորների
Նոր հասցէ՝ Berlin N. W. Luisenstr. 67.
lephon Amt. Norden. 92—74.
(հ. ու.) 412. 20—1

ՂԱՐԱՍՈՒԲԱԶԱՐ
հայոց եկեղեցու համար հարկաւոր է նագրագէտ ՀՄՈՒՏ երկրորդ
ՏԻՐԱՑՈՒ
Պէտք է պարապէ դպրոցում նաև երգ ղութիւն։ Պայմաններն են. եկեղեցուց ճիկ 180 րուբլի, արդիւնք 250—300 ր ուսումնարանից 60 րուբլի։ Դիմել՝ Г базаръ (Таврич. губ.), Священнику цатуру Мѣдникяну.
532. 3—
օ.մ.

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный